











Պատկեր 1.



պատկ. 2.



պատկ. 3.



պատկ. 4.



պատկ. 5.



Պատկեր 6.



պատկ.



պատկ. 8.



պատկ. 9.



պատկ. 10.



պատկ. 11.



Պատկեր 12.



պատկ. 13.



պատկ. 14.



պատկ. 15.



Պատկեր 16.



պատկ. 17.



Պատկեր 18.



պատկ. 18.







115  
1909

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ.

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ

1901

16441

Дозволено цензурою. С.-Петербургъ, 22 Марта 1901 года.



332008

Типографія „Пушкинская Скорочетаня“, Лештуковъ 4.



## ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԿԻՆ

ՆՈՒՆԻՍ, ԳԱՄԲԱՐԵԱՆՑԻՆ

Դուք քնքոյշ հոգատարութեամբ միշտ խնամել էք  
Վարչաւայում, Բիգայում և արտասահմանում ցրուած  
մեր աղքատիկ ուսանողներին և ցրուեալ եղբայրներին—  
Թէ խօսքով և Թէ գործով:

Ձեր զգայուն սիրտը միշտ արձագանք է տուել նո-  
րանց կարիքներին:

Ձեր սիրտից խօսքը միշտ հնչել է նրանց ականջին:  
Թոյլ տուէք ուրեմն Ձեր ազնիւ անուանը նուիրել իմ  
այս համեստ աշխատութիւնը, իբրև նշան Ձեր արգիւնա-  
ւէտ գործունէութեան, իբրև առհաւատչեաց խորին յար-  
գանաց:

Հեղինակը.

Ս.-Պետերբուրգ,

1901 թ.





Երեխային պէտք է դաստիարակել իրա, հայ-  
րենիքի և ամբողջ մարդկութեան համար:

Դաստիարակութեան նպատակը պէտք է լինի՝  
պատրաստել կարելւոյն չափ առողջ և ամենալաւ  
Ֆիզիքական ու բարոյական ընդունակութիւններով  
օժտուած անհատներ, որոնք ճէնց այդ լատկութիւն-  
ների շնորհիւ կը կարողանան աջակցել մարդկային  
առաջադիմութեանը:







Ամենքին յայտնի փաստ է, որ մեր ընտանիքներում՝ երեխաների դաստիարակութեան գործը չափազանց աննախանձելի գրութեան մջ է:

Մեր ծնողները բոլորովին չգիտեն իրանց զավակների հետ վարուելու ձևը:

Երկու ծայրայեղութիւններից մէկը. այսինքն՝ նրանք կամ երես են տալիս երեխաներին կամ՝ չափազանց խիստ վարվում հեաները: Սակայն աւելի յաճախ նրանք ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում երեխայի դաստիարակութեան վրայ:

Սյդ պատճառով երեխաներն, առանց հսկողութեան ու հոգատարութեան մնալով, փչանում են թէ՛ ֆիզիքապէս և թէ՛ բարոյապէս. նրանք չեն սովորում աշխատել:

Մանելով դպրոց, որտեղ նպատակայարմար կրթութիւն չկայ, երեխաները վերջնականապէս կորչում են հասարակական կեանքի համար. դառնում են հասարակ մեքենայ՝ առանց կամքի ու ընտելութեան: Բայց չէ՞ որ կեանքն այդպիսի անհատներ չի պահանջում...

Այդպիսով մեր հասարակական կեանքի նսեմութիւնը որոշ չափով կախուած է մանկական վտա դաստիարակութիւնից, որը երեխային չի տալիս այն բարոյական հիմունքները, որոնց վրայ պիտի ամրանայ մեծերի կեանքն ու հասարակական յարաբերութիւնները:

Բաղմատիւ են մեր թերութիւններն ու ախտերը, այդ պատճառով էլ ամենայն ջանք ու խելացի միջոցներ պէտք է դորձ դնել մատաղ սերունդին հաստատուն կամք, անթերի բնաւորութիւն ներշնչելու համար:

Այդ դաստիարակչական դորձում՝ ճնողներին մեծ ծառայութիւն կարող է մատուցանել ժառանգականութեան օրենքներն իմանալը:

Իւրաքանչիւր մարդ ժառանգականութեան շնորհիւ ստանում է որոշ յատկութիւններ, որոնցով նա տարբերւում է միւսներից:

Մայրն, իր երեխային լաւ ճանաչելով, կանգնած կը լինի իւր կոչման բարձրութեան վրայ:

Ահա այդ ժամանակ կարելի է կանոնաւոր դաստիարակութեամբ մեծ կամ փոքր չափով փոփոխել անհատի յատկութիւնները:

Բժ. Ա. Բուդուղեան.

Ս.-Պետերբուրգ,

1901 թ.



Ինչպէս յայտնի է, օրդանիղմներն իրանց բեղմնաւորութեան ընթացքում ժառանգաբար պահպանուում են և կրկնում նախահայրերի տիպը. և այդ յատկութիւնն անցնում է սերունդից սերունդ.

Չնայելով այդ մշտական օրէնքին, բնութեան մէջ պատահում են միևնոյն տիպի բազմաթիւ տեսակներն՝ այս կամ այն տարբեր ձևակերպութեամբ:

Բացի դրանից իւրաքանչիւր անճատ ունի իր անճատական առանձնայատկութիւնները, որոնցով նա տարբերուում է միևնոյն տիպի միւս անճատներից:

Այդ անճատական յատկութիւններն էլ անցնում են ժառանգներին, որոնք իրանց կողմից ևս գոյացնում են նոր առանձնայատկութիւններ՝ ժառանգականի նեո միացած:

Ժառանգականի նեո զուգահեռաբար գոյութիւն են ստանում նաև բոլորովին նոր—բնածին յատկութիւններ, որոնք նոյնպէս կարող են փոխանցնել սերունդից սերունդ:

Ինչպէս յայտնի է, իւրաքանչիւր անճատ ա-

ուջ է զպիս երկու առանձին անհատներից—հօրից ու մօրից: Այդ հանգամանքն աւելի բարդացնում է վերոյիշեալ իրողութիւնը:

Վերջապէս հիւանդութեան կամ մի այլ պատճառով անհատի զարգացումը կարող է շեղուել բնական ճանապարհից և այն ժամանակ ժառանգականութեան հարցն աւելի կճանրանայ:

Այդ բոլորից պարզ երևում է, որ ժառանգականութիւնը ներկայացնում է մի չափազանց բարդ երևոյթ:

Այդ բարդ երևոյթը— այսինքն ժառանգականութեան հարցը պարզաբանելու համար աշխատել են նշանաւոր փիլիսոփաներ ու բնադէաներ՝ Արիստոտելից սկսած մինև Դարուին, Սպենսեր և միւսները: Այնուամենայնիւ հարցը դեռ շատ մութ կողմեր ունի:

Յամենայն դէպս ժամանակակից գիտութիւնն հաւաքել է բազմաթիւ գիտողութիւններ, որոնք բաւականաչափ պարզում են ժառանգականութեան նշանակութիւնը Ֆիզիքական ու հոգեկան առողջութեան համար:

Անհնարին է երեխային կանոնաւոր կերպով հասկանալ ու գնահատել, եթէ ուշադրութիւն չգարձնուի նրա ժառանգած Ֆիզիքական ու հոգեկան յատկութիւնների վրայ:

Այդ յատկութիւնների համեմատ պիտի գաստիարակէ մայրն իր երեխային, որպէսզի այդ փոքրիկ ու թոյլ էակը ժամանակի ընթացքում ազնիւ ու լաւ մարդ դառնայ:

Բարոյականն զաստիարակութեանն զլիաւոր  
գործօնն է կազմում այն միջնալորդը, որը թաղա-  
ւորում է ընտանիքում և որի հետ սերտ կա-  
պուած է սպազայ մարդու ներքին աշխարհը:

Երեխայի զաստիարակութիւնը մեծ մասամբ  
ամբողջապէս կախուած է մօրից:

Մանկութիւնից արմատացած վատ սովորու-  
թիւնները մնում են մինչև կեանքի վերջը. ահա այդ  
պատճառով մօր պարտականութիւնն է ծննդեան  
հէնց առաջին օրից հսկել իր երեխայի վրայ:

Իհարկէ զա չափազանց զժուար խնդիր է, իր  
զաւակին զաստիարակելիս մայրը զաստիարակում  
է ինքն իրան:

---

Բ.

Յաճախ հօր կամ մօր մի որեէ յատկութիւ-  
նը չի անցնում երեխաներին, երբեմն էլ բոլոր ե-  
րեխաների մէջ հաւասար չափով զարգացած չի լի-  
նում այս կամ այն ժառանգական յատկութիւնը:

Ժառանգականութեան աստիճանը ցոյց տա-  
լու համար բաւական է վերցնել մարդու երկարա-  
կեցութիւնը:

Սովորաբար մարդ արարածն սպրում է 60—  
70—80 տարի:

Մինչև 90—100 տարի սպրելը սակաւ պա-  
տահող երեղթ է, իսկ 100 տարուց աւելի կեանք  
ունեցող մարդիկ կազմում են բացառութիւններ,



որոնք միշտ էլ առանձին ուշադրութիւն են դրաւում:

Փաստերը ցոյց են տալիս, որ այդպիսի երկարակեցութիւնը ժառանգական յատկութիւն է կազմում: Յիշենք օրինակներ.

Լոնդոնում աիկին Իոհաննան մեռաւ 138 տարեկան հասակում, թողնելով մի 103 տարեկան ազջեկ:

Հռովմում երգիչ Գալուինին մեռաւ 140 տարեկան հասակում, թողնելով 113 տարեկան մի որդի:

Գուբլինում մի այդեպան մեռաւ 138 տարեկան հասակում, թողնելով մի 122 տարեկան որդի և 102 տարեկան թոռ:

Այդպիսի օրինակները բազմաթիւ են, բայց բաւականանանք վերոյիշեալներով:

Դրանցից պարզ երևում է, որ 100 տարուց սուելի սպրեւը յատկութիւնը ժառանգաբար անցնում է սերունդից սերունդ:

Թէ որքան մեծ նշանակութիւն ունի ժառանգականութիւնը մարդկային երկարակեցութեան համար—այդ երևում է այն փաստից, որ նոյն-իսկ «մարդկանց կեանքն ապահովեցնող բնկերութիւններն» ուշադրութիւն են դարձնում դրանց վրայ:

Ժառանգականութեան դերն երևում է նաև մազերը թափուելու և սպիտակելու հարցում:

Կան ամբողջ բնատանիքներ, որոնց մազերը շատ ուշ են սպիտակում և երկար են մնում. և բնդհակառակը կան բնատանիքներ, որոնց ճաղատու-

Թիւնն ու մազերի սպիտակութիւնն երևում է արդէն ջահիլ հասակում:

Բեղմնաւորութեան ընդունակութիւնն էլ ժառանգաբար անցնում է սերունդից սերունդ՝ թէ սրական և թէ իզական ծիւղով:

Բայց հարցը միայն դրանով չի վերջանում: Մենք ամեն քայլափոխում աեսնում ենք, որ երեխաները նման են լինում իրանց ծնողներին կազմուածքով, դէմքով, հասակով, ձեռքերի ու ոտների մեծութեամբ և այլն:

Առանձնապէս զարմանալի է դէմքերի նմանութիւնը, որի շնորհիւ մարդ կարողանում է ճանաչել որդուն, միայն հօր կամ մօր հետ ծանօթ լինելով:

Երբեմն դէմքի որևէ բնորոշ յատկութիւնը կրկնում է սերունդից սերունդ: Շատ անգամ պատահում է, որ ծնողները, որդիները և թոռները ունենում են նոյնաձև քիթ, ճակատ կամ կզակ:

Երբեմն էլ ժառանգաբար անցնում է բարձր կամ ցածր հասակը, պինդ կամ քնքոյշ կազմուածքը, չաղանալու կամ նիհարելու արամազրութիւնը և այլն:

Ընդհանրապէս ժառանգականութիւնը մեծ ազդեցութիւն ունի անհատի կազմուածքի վրայ և այդ հանգամանքից վաղուց արդէն օդաւում են գիւղատնտեսներն անասունների—(ոչխարների, ձիերի, կովերի և այլն)—այս կամ այն յատկութիւնը զարգացնելու համար:

Գերմանական կայսրներից մէկը, մեծ նշանակութիւն տալով իր ղինւորների բարձր հասակին, թոյլ չէր տալիս նրանց ցածրահասակ կանանց հետ ամուսնանալ, որպէսզի ապագայ սերունդը ցածրահասակ չլինի:

Գ.

Դժուար է ճիշտ կերպով բնորոշել, թէ ժառանգականութիւնն ինչ նշանակութիւն ունի մարդու հոգեկան աշխարհի վրայ, որովհետեւ վերջինս զանազան փոփոխութիւնների է ենթարկուում՝ դաստիարակութեան ազդեցութեամբ: Սյսակը դաստիարակութիւնը պէտք է հասկանալ ամենալայն մաքով:

Եթէ երեխաները նման են լինում՝ ծնողներին իրանց բնաւորութեամբ, կենցաղավարութեամբ, ճաշակով, նոյն իսկ մտածելու եղանակով—այդ ամենը կարող են առաջացած լինել ոչ թէ ժառանգականութեան, այլ դաստիարակութեան ու նմանորութեան շնորհիւ:

Բացի դրանից բնաւորութեան բնածին և ժառանգական յատկութիւնները կարող են բազմազան փոփոխութիւնների ենթարկուել—նոյն իսկ անհետանալ միջավայրի, կեանքի պայմանների և կամ անհատի ինքնօգնութեան միջոցով:

Չնայելով այդ բոլորին, եթէ մենք ուշի ուշով դիտենք ընտանիքը, այն ժամանակ անշուշտ շատ



անհասանելի մէջ կը նկատուիք բնաւորութեան ու տեմպերամենտի ժառանգական յատկութիւններ:

Մեզանից իւրաքանչիւրն իր ծանօթ ընտանիքներում նկատած կլինի, որ մի քանի միմեանց հեակող սերունդներ արտայայտում են միատեսակ ստոնասրտութիւն կամ զթառատութիւն, ժլատութիւն կամ շուայութիւն, տոկունութիւն կամ թուլակամութիւն, չնայելով որ զբանք բոլորովին տարբեր հասարակական զիրք, կենցաղաւարութիւն ու դաստիարակութիւն են ունեցել:

Դրա փոխարէն հոգեբանական ժառանգութիւնն անվիճելի է, երբ հարցը վերաբերում է մարդու երաժշտական, նկարչական կամ բանաստեղծական ձիրքին:

Սյրպիսի ձիրքը կախումն ունի մեր հոգեկան կազմուածքի բոլորովին անյայտ յատկութիւններից: Նա բնածին է և դաստիարակութիւնը կարող է միայն զարգացնել ու մեծ կամ փոքր չափով արդիւնաւէտ դարձնել նրան:

Ահա այդ պատճառով էթէ մենք մի ընտանիքի կամ մի ամբողջ սերունդի մի քանի անգամների մէջ նկատում ենք նոյնատեսակ տաղանդ— դա անկասկած ցոյց է տալիս ժառանգականութեան կատարած դերը:

Երաժշտական տաղանդի վերաբերմամբ մի զարմանալի երևոյթ է ներկայացնում Բախի ընտանիքը, որն երկու դարաշրջանում տուել է 29 նշանաւոր երաժշտադէտներ, որոնցից ամենասաղանդաւորն էր Սերաստեան Բախը:



Նուշակաւոր Մոյարաթի Նայրը նշանաւոր երա-  
ժշտագէտ էր. նրա քոյրն ու երկու որդիներն էլ  
ունէին երաժշտական ձիրք:

Բեթճովէնի հայրն ու պապը մասնագէտ եր-  
դիչներ ու երաժշտագէտներ էին:

Նշանաւոր նկարիչ Տիցիանի ընտանիքում  
կային բացի իրանից Տ ուրիշ նկարիչներ, որոնց  
թուում նրա երկու որդիները, թոռները և այլն:

Նշանաւոր Մուրիլիօյի երկու հօրեղբայրներն  
ու մէկ եղբօրորդին էլ յայտնի դարձան իրանց  
նկարչական շնորհքով:

Գրականութեան ասպարիզում էլ պատահում  
են շատ գէպքեր, որոնք նոյնպէս ցոյց են տալիս  
ժառանգականութեան դերը. օրինակ երկու եղբայր  
Միւսսեները, Նայր և որդի Գիւմաները, հայր և  
որդի Րասինները և այլն:

---

Գ.

Մինչև այժմ մենք խօսում էինք այն ժա-  
ռանգական յատկութիւնների մասին, որոնք մար-  
դու զարդն ու պարծանքն են կազմում և նրա  
կեանքն օգտակար դարձնում:

Սակայն կեանքը ցոյց է տալիս, որ դժբախ-  
տաբար մարդկային կորստաբեր ախտերն էլ են-  
թարկւում են ժառանգականութեան նոյն օրէնք-  
ներին:

Այդ ախտերն իրանց սկզբնական աստիճանում սակաւ նշանակութիւն ունին և քիչ դեր են խաղում մարդկային կեանքում, բայց երբ զարգանում—հասունանում են, այն ժամանակ դառնում են բուռն կիրք, որը դերի է զարձնում անհատին, որից կախուած է լինում մարդու ամբողջ կեանքն ու վարմունքը:

Սյդպիսի փնասակար հակումներից չափազանց տարածուած է թղթախաղը, որն երբեմն սարկացնում է շատերին:

Պատահում են ընտանիքներ, որոնց անդամների մեծամասնութիւնը, նոյն իսկ սերունդից սերունդ, վարակուած է լինում այդ ախտով— թղթախաղի բուռն ցանկութեամբ:

Իհարկէ այստեղ էլ մեծ դեր կարող են խաղալ ժառանգականութիւնից բոլորովին անկախ պատճառներ, այն է՝ վատ դաստիարակութիւն, փնասակար օրինակներ և ուրիշ շատ հանգամանքներ:

Եթէ երեխան մեծացել է այնպիսի ընտանիքում, ուր թղթախաղը սովորական զբաղմունք ու մշական խօսակցութիւնների նիւթ է կազմում, իհարկէ նա հեշտութեամբ կվարժուի այդ զբաղմունքին: Նրա համար թղթախաղն հեազհեաէ կը դառնայ բնական զուարճութեան առարկայ:

Բայց շատ դէպքերում երեխաներն այդ ախտին արտայայտում են նոյն իսկ այն ժամանակ, երբ հեռու են եղել վատ ազդեցութիւնից: Սյստեղ արդէն միակ ժառանգականութիւնն է դեր խաղացողը:



Ոգելից բմպելիների չափազանց դործածութիւնը կամ աւելի ճիշտն ասած—սովորական արբեցողութիւնն էլ շատ անգամ անցնում է սերունդից սերունդ—ժառանգաբար:

Սովորական արբեցողութիւնը համարւում է ոչ թէ ախտ, այլ մի առանձին հիւանդութիւն:

Արբեցողութեան հետեանքը կազմող բազմազան հոգեկան ու մարմնական հիւանդոտ երևոյթներն առաջանում են միայն այն ժամանակ, երբ օրգանիզմն ենթարկուել է պըռհոլի թունաւոր ազդեցութեանը:

Այստեղ էլ երբեմն մեծ դեր է խաղում վատ օրինակը, բայց սակաւաթիւ չեն այն դէպքերը, երբ երեխաները հեռու են վատ օրինակից և միայն ժառանգականութեան շնորհիւ թունդ արբեցող են դառնում:

Վիճակազրութիւնից երևում է, որ հիւսիսային Ամերիկայում արբեցողների 40<sup>0</sup>/<sub>0</sub> միայն ժառանգականութեան հետեանք է:

---

Ե.

Ժառանգականութիւնը զարգացնում է հոգեկան այն յատկութիւնները, որոնք արամազրոււմ են մարդուն ոճիրներ գործելու:

Այստեղ մենք ի նկատի չունինք այն պատահական օրինազանցութիւնները, որոնց հիմքն են կազմում բացառիկ հանգամանքներ: Մեր խօսքը



վերաբերում է այն անձանց, որոնք ունենում են մի տեսակ բնածին հակումն գէպի հակահասարակական վարմունքը, որոնք, օրինակ, ասում են ազնիւ աշխատանքը, արատաւորում են օտարի պատիւը, յափշտակում են ուրիշի սեպհականութիւնը և այլն:

Այդպիսի յատկութիւններով աչքի են ընկնում սովորական ոճրագործները, որոնք դեռ մանուկ հասակից սովորում են գողանալ, թափառաշրջիկ կեանք վարել, նոյն իսկ մարդասպանութիւն կատարել:

Ինչպէս յայանի է, իտալացի պսիխատր Լոմբրոզօն և նրա համախոհները պնդում են \*), թէ ոճրագործը ներկայացնում է մարդաբանական մի առանձին տիպ, որը բնորոշում է դանկի, ուղեղի և բնահանրապէս ջղերի յատուկ շեղումներով:

Իրանք ասում են, թէ ոճրագործները ծնւում են իբրև ոճրագործներ, այսինքն նրանք իրանց մարդաբանական յատկութիւններով ի բնէ նշանակուած են լինում ոճիրներ կատարելու:

Գիտութիւնն արդէն բուական հիմնաւոր կերպով աշխատել է հերքել այդ կարծիքը:

Այստեղ շատ մեծ դեր են կատարում շրջանն ու սոցիալական պայմանները, ուստի գժուար է առանձնապէս զատել ու բնորոշել ժառանգականութեան մասնակցութիւնը ոճրագործութեան հարցում:

\*) Տես իմ «Մի է յանցաւոր» գրքոյկը:



Յամենայն դէպս ժառանգականութիւնը այստեղ նշանակութիւն ունի այն չափով, ինչ չափով որ կարող են սերունդից սերունդ անցնել բնաւորութեան այն յատկութիւնները, որոնք տրամադրում են անհասին ոճիր գործելու կամ դէպի ոճրագործութիւնը մղող հակումներին դիմադրելու:

Իացի դրանից ժառանգականութիւնն այս հարցում կողմնակի դեր էլ է խաղում, նպաստելով արբեցողութեան տարածմանը: Այդ ախտը, ինչպէս յայտնի է, ոճրագործութեան զլխաւոր գործօններից մէկն է կազմում:

Այդպիսով երբեմն ոճրագործութեան հակումները արբեցողութեան հետ միասին են անցնում սերունդից սերունդ: Իրա համար մի դեղեցիկ օրինակ է ներկայացնում ամերիկացի Ջուկի ընտանիքը:

Այդ ընտանիքի զլուխը—տիկին Ադա Ջուկը [Թափառաշրջիկ դող էր, նրանից առաջացաւ մի սերունդ՝ 834 անդամներից բաղկացած:

Իրանցից 709-ի մասին հաւաքած ծիշտ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ջուկի սերունդը տուել է 76 ոճրագործ, 142 մուրացկան, 181 պոռնիկներ. միւս անդամներից 76-ն էլ «մուրացկանների տանն են» խնամուել:

Իրանք բոլորն էլ մեծ կամ փոքր չափով արբեցող էին:

Նինգերորդ սերունդի զրեթէ բոլոր կանայք անբարոյական էին, իսկ աղամարդիկ ոճրագործ:

Սնկասկած այդ ընտանիքի պատմութեան մէջ  
զեր է խաղացել ժառանգականութիւնը, բայց  
խնարկէ ուրիշ նշանաւոր դործօնների հետ միասին:

9.

Գիտութիւնը զեռ չէ պարզել, թէ արդեօք  
ժառանգականութեան հարցում ծնողների կատարած  
զերն ի՞նչ չափով կախումն ունի սեռից—  
այսինքն երեխայի վրայ հայրն է աւելի ազդում, թէ  
մայրը:

Փաստերը ցոյց են տալիս, որ երբեմն հօր ազ-  
դեցութիւնն է զօրեղ լինում, երբեմն մօր:

Կայ նաև հակադիր ժառանգականութիւն,  
այսինքն աղջիկները նման են լինում հօրը, իսկ  
որդիքը—մօրը:

Այդ հարցի բացատրութիւնը պատկանում է  
զերմանացի պսիխատր Րիխարցին: Նա մտածեց  
ժառանգականութիւնը միացնել այն հարցի հետ,  
թէ ի՞նչ պայմաններից կախումն ունի այս կամ  
այն սեռի առաջանալը:

Նա ենթադրում էր, թէ արական սեռը սաղ-  
մի զարգացման ամենաբարձր աստիճանն է, և այդ  
աստիճանը տեղի է ունենում միայն այն ժամա-  
նակ, երբ մօր պաղաբերութեան ընդունակութիւնը  
խիստ լարուած է:

Եթէ մայրը լիովին համապատասխանում է յի-  
շեալ պահանջին, այն ժամանակ ծնւում է արական

սեռի երեխայ, որն այդ դէպքում ժառանգում է զիսաւորապէս մօր յատկութիւնները:

Եթէ մօր սեռական ընդունակութիւնն այնքան մեծ չէ, այն ժամանակ սաղմն իւր զարգացման բարձր աստիճանին չի հասնում, այսինքն ծնւում է աղջիկ, որը նման է լինում հօրը, որովհետեւ մայրն անկարող է լինում զիմադրել հօր ժառանգական ազդեցութեանը:

Այդպիսով իսկական նորման հակադիր ժառանգականութիւնն է, իսկ եթէ որդին հօրն է նմանում կամ աղջիկը—մօրը, զրանք բացառիկ շեղումներ են, որոնք նպաստում են օրգանիզմի թերութիւններին և տեղի են ունենում այն ժամանակ, երբ մայրը յղիացել է ոչ բարեբաստիկ պայմաններում:

Աւելի աննպաստ են լինում այն դէպքերը, երբ երեխաներն իրանց ծնողների հետ ոչ մի նմանութիւն չեն ունենում:

Ահա այդ է Բիխարցի թէորիան, որն իր ժամանակին ամբողջ զիանական աշխարհի ուշադրութիւնը գրաւեց:

Յաճախ պատահում է, որ բոլորովին առողջ, զեղեցիկ ու ընդունակ երեխաներն արտայայտում են հակադիր ժառանգականութեան նշաններ, այն է աղջիկները նման են լինում հօրը, իսկ որդիները—մօրը:

Պատմական շատ անձեր, որոնք աչքի ընկնող բնաւորութեան ու խելքի տէր են եղել, ունեցել են նշանաւոր մայրեր:



Նշանաւոր հայրերից ծնուած ազջիկների մասին պատմական օրինակներ չկան. սակայն սովորական կեանքում հակադիր ժառանգականութեան օրէնքը հաստատուում է նաև զրանց վերաբերմամբ:

Բայց պատահում են և բոլորովին հակառակ օրինակներ, ուստի անհրանին է սնդեղ, թէ դէպքերի մի համակարգութիւնն օրէնք է, իսկ միւսը բացառութիւն:

Սյգիսով պէտք է խոստովանել, որ ծնողների ժառանգական յատկութիւնները զանազան կերպ են անցնում արական կամ իգական երեխաներին և այդ զանազանութիւնն է պատճառը, որ միևնոյն ընտանիքի մի երեխան արտայայտում է ուղղադիր ժառանգականութեան հետքերը, միւսը — հակադիր և այլն:

Երբեմն ժառանգների վրայ նկատուում է ծնողներից միայն մէկի ազդեցութիւնը, երբեմն էլ երկուսինը միասին:

---

Է.

Պատահում են դէպքեր, երբ երեխաներն արտայայտում են իրանց նախահայրերի այնպիսի յատկութիւնները, որոնցից ոչ հայրն է ունեցել և ոչ մայրը:

Դա ժառանգականութեան մի առանձին տեսակն է կազմում և կոչւում է «ատաւիզմ» — (վերադարձ դէպի նախկին տիպը):



Իբրև օրինակ կարող է ծառայել յայտնի մար-  
դարան Կաթրֆաժի հազորդած հեռեեալ դէպքը:

Մի նեղրուհի, որը ամուսնական կեանք էր վա-  
րում նեղրի հետ, ծնեց սպիտակամորթ երեխայ:  
Նա ահ ու սարսափի մէջ էր, որովհետև կարծում  
էր, թէ մարդիկ այդ բանն ամուսնական անհաւա-  
տարմութեանը կվերագրեն. սակայն նեղր ամուսի-  
նը, նորածին երեխային տեսնելով, յայտարարեց,  
որ նա շատ նման է իր պապին, որը նոյնպէս սպի-  
տակամորթ էր:

Նոստ անգամ բոլորովին առողջ ծնողներից  
ծնուած երեխաներն ունենում են հոգեկան և ջղային  
հիւանդութիւններ: Դա նոյնպէս առաջ է գալիս  
ատաւիղմի շնորհիւ, այսինքն թոռներն արտայայ-  
տում են պապի կամ տատի հիւանդութիւնը:

Բուսական և կենդանական կեանքում էլ պա-  
տահում են շատ դէպքեր, երբ ժառանգական յա-  
կութիւններն արտայայտւում են մի քանի սերունդ-  
ներից յետոյ:

Սյգպիսի փաստերը մեծ դեր են խաղում  
«Դարուինիզմի» մէջ: Երբ անգլիացի յայտնի զիա-  
նական Դարուինը \*) հաստատեց իր թէորիան «տե-  
սակների ծագման» մասին, այն ժամանակ շատ  
բնագէտներ գրաւուեցին նոր գաղափարով և սկը-  
սեցին մարդկանց մէջ էլ որոնել ատաւիղմի հետ-  
քեր—ամենալայն մտքով:

---

\*) Պատրաստ է տպագրութեան նոյն հեղինակի  
«Դարուինիզմ, Այժ և աշխատանք» գրքոյից:

Յայանի գիտնական Կարլ Փոխար ատաւիզմի ազդեցութեանն էր վերագրում նաև միկրոցեֆալների կամ փոքրագլուխների առաջ գալը:

Ինչպէս յայանի է, միկրոցեֆալ կոչուում են այն ապուշները, որոնք ունենում են չափազանց փոքր գանկ, ինչպէս և կապիկները: Հէնց այդ պատճառով էլ Փոխար յիշեալ երևոյթը ատաւիզմ էր համարում, այսինքն կարծում էր թէ մարդիկ այդ աեսակ ժառանգականութեամբ վերագառնում են իրանց նախնական տիպին—կապիկին:

Բայց այժմ արդէն ապացուցուած է այդ աեսակէտի սխալ լինելը, որովհետև այդ երևոյթը հիւանդութեան հետեանք է:

Ատաւիզմին է պատկանում նաև անուղղակի կամ ուրիշ խօսքերով ասած, կողմնակի ժառանգականութիւնը, որից կախումն ունի արիւնակից ազգականների նմանութիւնը: Սյսպէս օրինակ նման են լինում՝ քրօջորդին քեռուն, հօրեղբօր որդիները կամ ազջիկները միմեանց և այլն:

Այդ նմանութիւնը լինում է թէ հոգեկան և թէ ֆիզիքական: Նա նշմարուում է թէ արտաքին կազմուածքի, թէ բնաւորութեան, թէ տաղանդի մէջ: Նոյն իսկ հիւանդութիւնների մէջ երևում է նրա հետքերը: Երբեմն էլ այդ նմանութիւնը հասնում է այն աստիճանին, ինչ չափով որ կարող է լինել միայն ծնողների ու զաւակների մէջ:

Քիչ չեն պատահում դէպքեր, երբ երեխան աւելի նման է լինում քեռուն, հօրեղբօրը կամ մի ուրիշ ազգականին, քան թէ հօրը կամ մօրը: Թէև

առաջինները շատ հեռու են եղել այդ ընտանի-  
քից:

Ընդհանրապէս ժառանգականութեան էութիւ-  
նը գեռ մինչև հիմա մի անլուծելի հանելուկ է  
մնացել դիտութեան համար: Պարզուած են միայն  
մի քանի կողմերը, այն էլ ոչ վերջնականապէս:

Գարուինի կարծիքով սաղմը, որն առաջ է  
գալիս սեռական յարաբերութիւններից, ենթարկ-  
ւում է ծնողական բոլոր յատկութիւնների ազդե-  
ցութեանը և կարող է ժառանգել դրանցից իւրա-  
քանչիւրին:

Շատերն այդ կարծիքն անհիմն են համարում:

Օրինակ դերմանացի պրոֆֆեսսոր Վէյսման  
սպացուցանում է, որ յետագայ սերունդին ժառան-  
գաբար անցնում են ծնողների միայն բնածին յա-  
կութիւնները և ոչ բոլորը: Պատահական կամ  
կողմնակի կերպով սեպհականաժ յատկութիւնները  
չեն անցնում ժառանգներին:

Նա մի շարք փորձեր կատարեց, որպէսզի  
ցոյց տայ, թէ ծնողի այս կամ այն անգամի պա-  
տահական խեղաթիւրումը ոչ մի կերպ չի փոխա-  
դրւում ժառանգներին:

Նա վերցրեց 12 սպիտակ մուկ և պոչերը  
կտրեց: 14 ամսից յետոյ դրանցից ծնան 333 մրկ-  
նիկներ, բայց բոլորն էլ ամբողջ պոչերով:

Դրանից յետոյ նա վերցրեց այդ նոր սերուն-  
դից 15 մուկ և դարձեալ կտրեց պոչերը: Մի տար-  
ուայ ընթացքում դրանցից ծնան 233 ձագեր,  
բայց դարձեալ բոլորն էլ կանոնաւոր պոչերով:



Սյդ ձեռով նա շարունակեց իր փորձերը մի քանի տարի—մինչև մկների 18-րորդ սերունդը, սակայն ոչ մի անգամ չպատահեց որ նորածին ձագը պոչատ կամ խեղաթիւրուած պոչով լինէր:

Ժառանգականութեան մասին գոյութիւն ունեցող բոլոր միւս թէորիանները—(Գաշտոն, Բրուիօ, Գօտիէ, չեկկէլ) ընդհանուր առմամբ նման են Գարուինի թէորիային:

Նշակաւոր Սպենսերն էլ ժառանգականութեան մասին իր առանձին հայեացքն ունի. բայց նրա թէորիան փիլիսոփայական մտածողութեան հեռանք է և ոչ թէ բնութեան վերլուծման ու հետաքննութեան:

## Ը.

Սյժմ նորից դառնանք գլխաւոր հարցին և փաստերով տեսնենք, թէ հիւանդութիւններն ինչպէս են անցնում սերունդից սերունդ ժառանգաբար:

Սյգպիսի դէպքերը, այսինքն ժառանգական հիւանդութիւններն այնքան շատ են կրկնում, որ ըստ երևոյթին այստեղ ոչ մի կասկած չէր կարող լինել ժառանգականութեան կատարած դերի մասին:

Սյնուամենայնիւ գոյութիւն ունին բազմաթիւ միմեանց հակասող կարծիքներ և այդ հարցը զիանական տեսակէտից դեռ վիճելի է համարում:



Մի՞թէ քիչ է պատահում, որ ընտանիքի մի քանի անդամները որոշ հասակում ենթարկւում են այս կամ այն ժառանգական հիւանդութեանը, իսկ մի քանիսը բոլորովին ազատ են մնում նրանից:

Մի՞թէ աւելի ճիշտ չի լինի ասել, թէ ժառանգաբար անցնում է միայն հիւանդանալու արամադրութիւնը, որն անհատի վրայ ներդործող ազդեցութեան համեմատ կարող է զարգանալ— իսկական հիւանդութիւն դառնալ:

Այստեղ մի շարք հետաքրքիր հարցեր են առաջ գալիս. բայց նրանց մասին խօսելը մեզ շատ հեռուն կտանէր, ուստի գառնանք հաստատուած ընդհանուր փաստերին:

Ամենից առաջ պէտք է յիշել մի քանի անատոմիական ու ֆիզիոլոգիական յատկութիւններ, ժառանգաբար անցնելու մասին:

Օրինակ կան մարդիկ, որոնց համար քինինի ամենաչնչին քանակն անդամ բաւական է սաստիկ դիլատացաւ և սրտի խտնոց առաջ բերելու համար: Կան մարդիկ, որոնք հասարակ սուրճի ազդեցութիւնից սաստիկ թմրում ու քնել են ուզում: Եւ այդ յատկութիւններն երբեմն նկատուում են ընտանիքի բոլոր անդամների մէջ:

Ֆիզիոլոգիական բնածին յատկութիւնների այդ աեսակին է պատկանում նաև «ճեմոֆիլիան»:

Ճեմոֆիլիան օրդանիզմի և արեան մի աեսակ յատկութիւն է, որով արիւնը դժուարութեամբ է թանձրանում և այդ պատճառով էլ դժուար է

լինում արիւնահոսութիւնը կանգնեցնել: Այնպէս որ այգախիտ օրգանիզմների ամենաչնչին վէրքն անգամ կարող է կեանքի համար վտանգաւոր լինել:

Հեմոֆիլիան մեծ մասամբ ժառանգաբար անցնում է սերունդից սերունդ պլաստորապէս արական ծիւղով:

Դրանից յետոյ ժառանգականութեան աղբյուրութիւնն երեւում է և վարակիչ հիւանդութիւնների վերաբերմամբ (իմունիտետ):

Ինչպէս յայտնի է, այդ հիւանդութիւններն առաջ են գալիս զանազան բակտերիաներից, որոնք բուն են զնում մարդու օրգանիզմի մէջ: Ըստ երկույթին ժառանգականութիւնը ոչ մի կապ չպիտք է ունենար զրանց հետ, սակայն իրականութիւնը բարբովին հակառակն է ցոյց տալիս:

Այսպէս օրինակ, կան մարդիկ, որոնք չեն հիւանդանում նոյն իսկ ամենախիստ էպիդեմիաների ժամանակ և դա հեռանք է նրանց ժառանգական յատկութիւնների (իմունիտետ):

Փորձերը ցոյց են տալիս, որ երբեմն ամբողջ բնատանիքներ իրանց ժառանգական յատկութիւնների շնորհիւ չեն ստանում բկացաւի, կարմրախտի, ծաղկի հիւանդութիւն և այլն:

Սակայն կան և այնպիսի վարակիչ հիւանդութիւններ, որոնք մէկից միւսն են անցնում ժառանգաբար: Դրանց մէջ առաջի աեղն է բռնում թոքախտը—(տուբերկուլոզը):

Թոքախտն առաջ է գալիս տուբերկուլոզի

բայիլներէից, որոնց նշանակութիւնն առաջին անգամ գտաւ գիտնական Կոխը:

Իրանք մարդու օրգանիզմի մէջ մանուկ էն զրսից, բայց աճում և թոքախտ են առաջացնում միայն որոշ պայմաններում: Այսպէս օրինակ, մարդու կրծքի վանդակը պէտք է լինի սակաւ զարգացած, օրգանիզմը պէտք է ունենայ որոշ յատկութիւններ: Առանց զրան բայիլն ու նրա թունաւոր արտադրութիւնը—տոկսինը չեն կարող թոքախտ առաջացնել:

Իսկ այդպիսի կազմուածքն ու յատկութիւնները մեծ մասամբ ժառանգական են լինում:

Թոքախտային հիւանդութիւնն այնքան տարածուած է, որ շատերը նկատած կլինին բազմութիւ ընտանիքներ, որոնց անդամները կեանքի որոշ հասակում զոհ են գնում անգութ թոքախտին:

Հաւաքած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ այդ զոհերի հայրը կամ մայրը, երբեմն էլ քոյրերը, եղբայրները և նոյն իսկ արիւնակից ազգականներից շատերը մեռել են նոյնպէս թոքախտից:

Վիճակագրական տեղեկութիւններից երևում է, որ թոքախտաւորների զրեթէ մի երրորդ մասը ժառանգաբար է ստանում այդ կորստաբեր հիւանդութիւնը:

Նախանցեալ տարի իտալիայի Նեապոլ քաղաքում կայացաւ մի միջազգային համաժողով, տուրերկուլոզի գէմ կոուէու համար:

Այժմ համաժողովում հաղորդած տեղեկութիւններից երևաց, որ թոքախտից առաջացած մա-



Հոգութեան վերաբերմամբ Մոսկուան առաջին տեղն է բռնում:

Այսպէս իւրանչիւր տասը հազար բնակչին տալիս է թոքախտից մահացած՝

Մոսկվայում—45,68

Բերլինում—28,06

Լոնդոնում—17,68 և այլն:

Ռուսաստանում իւրաքանչիւր տարի երեք հարիւր հազար հոգուց աւելի ծաղիկ հասակում մեռնում են այդ հիւանդութիւնից, իրանց յետևից թողնելով հազարով անտէր, անպաշտպան որբեր ու այրիներ:

Հայաբնակ քաղաքներում ու գիւղերումն էլ վաղուց մուտք է դործել այդ սարսափելի ախտը...

Այսպէս օրինակ Ախալցխայում առաջ թոքախտաւորներին ըստ երևոյթին մասներով կարելի էր հաշուել, թէ և ժողովրդի մեծ մասը աղքատ գրութեան մէջ է, իսկ այժմ նրանց թիւը բաւական մեծացել է: Իրա պատճառներից մէկն այն է, որ ամառուայ սեզոնն անցնելուց յետոյ շատ ընտանիքներ տեղափոխւում են Արասթուման և ապրում վարակուած բնակարաններում և այդպիսով վարակում, որովհետև այդ բնակարանները դեղին ֆեկցիայի չեն ենթարկւում:

Բայց ի՞նչ է անում մեր հասարակութիւնն այդ ախտի դէմ կռուելու համար: Գրեթէ ոչինչ:

Այն ինչ արդէն մի քանի տարի է, որ ամբողջ արևմտեան Եւրոպան մի առանձին խաչակրաց արշաւանք է յայտարարել թոքախտի դէմ:



Սյստեղ իւրաքանչիւր պետութեան մէջ հան-  
դանակում են միլիոններ, հիմնում են բազմաթիւ  
ազգային միութիւններ, յատուկ ընկերութիւններ,  
որպէսզի անդութ տուբերկուրզին գէթ մասամբ  
սանձահարեն, նրա զոհերի թիւը պակասեցնեն:

Գերմանիայում այժմ մօտ 50 ժողովրդական  
սանատորիա կայ, այն ինչ սրանից տասը տարի  
առաջ այդտեղ ոչ մի այդպիսի հիմնարկութիւն  
չկար:

Միւս պետութիւններն էլ այդ հարցում յետ  
չեն մնացել:

Իսկ մեր Կովկասը զոնէ մի հաս այդպիսի  
սանատորիա չունի:

Մեր ժամանակի հսկայական ձեռնարկութիւն-  
ներն հիմնւում են ոչ միայն առանձին անհատների  
զոհաբերութեամբ, այլ և ամբողջ հասարակութեան  
համակրանքով ու ջանքերով...

---

Թ.

Փառանգաբար անցնող ախտերի շարքում  
թոքախտից յետոյ լուրջ ուշադրութեան արժանի  
է սիֆիլիսը \*), որը նոյնպէս բաւական տարա-  
ճուած է:

Սիֆիլիսը մեծ մասամբ հօրիցն է փոխւում  
ընտանիքի միւս անդամներին:

---

\*) Տես իմ «Սիֆիլիս» գրքոյկի երկրորդ հրատա-  
րակութիւնը:

Ինչպէս յայանի է, երբեմն այդ հիւանդութիւնը մնում է ծածուկ գրութեան մէջ և միայն ժամանակ առ ժամանակ ցոյց է ապիւս իր ոյժը:

Փորձից երևում է, որ սիֆիլիսը ժառանգաբար անցնում է յետագայ սերնդին, երբ յղիանալը աեղի է ունենում վարակուած ծնողի սիֆիլիսային նշաններ ունեցած ժամանակ: Այդ բանը պատահում է գլխաւորապէս առաջին տարիներում—վարակուելուց յետոյ:

Սակայն պատահում են և այնպիսի դէպքեր, երբ սիֆիլիսն անցնում է ժառանգներին, թէև յղութեան միջոցին ծնողների վրայ այդ հիւանդութեան ոչ մի նշանը չէ երևացել: Դա նշանակում է, սիֆիլիսը ծածուկ գրութեան շրջանումն է եղել:

Այսպէս թէ այնպէս ժառանգական սիֆիլիսը մեծ փասաներ է հասցնում մարդկութեանը և շատ անգամ անմեղ երեխաներն իրանց ծնողների պատճառով ամբողջ կեանքում տանջում, խեղաթիւրւում են այդ սարսափելի ախտից:

Ահա այդ պատճառով օգտակար և ցանկալի էր, որ իւրաքանչիւր անհատ ամուսնանալուց առաջ դիմէր բժշկի խորհրդին, ստանար վերջինիս թոյլատուութիւնն այդ սուրբ գործի համար և բժշկի վկայագիրը ներկայացնէր քահանային:

Թոքախտը, արբեցողութիւնը և սիֆիլիսը մարդկանց դէպի կորուստն են տանում, ուստի և իւրաքանչիւր անհատի պարտականութիւնն է բոլոր ջանքերով կռուել դրանց դէմ:

Զղային հիւանդութիւններն էլ ենթարկուած են ժառանգականութեան ազդեցութեանը, թէև նրանք կարող են բոլորովին այլ պատճառներից էլ առաջանալ:

Տարկաւոր է նկատել, որ ջղային հիւանդութիւնների մի մասը շատ է ենթարկուած ժառանգականութեան ազդեցութեանը, միւս մասը քիչ: Նոյնը կարելի է ասել և հոգեկան հիւանդութիւնների վերաբերմամբ:

Ընդհանրապէս դրանց շարքին պատկանում են լուսնոտութիւնը, ուշաթափութիւնը (հիստերիա), ներաստենիան, ապուշութեան շատ դէպքեր, խելագարութիւն, մելամաղձոտութիւն և այլն:

Շատ դէպքերում այդ հիւանդութիւններից իւրաքանչիւրը ծնողներից նոյնութեամբ անցնում է զաւակներին:

Մեծ նշանակութիւն ունին նաև պրոգրեսսիւ կաթուածն ու մէջքի ծիւրախտը (տարես), որոնք մեծ մասամբ սիմփիլիսից են առաջ գալիս, թէև կան և ուրիշ պատճառներ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ մեր առաջ բերած փաստերն ընդհանուր օրէնք չեն կազմում, թէև ժառանգականութիւնը որոշ դեր խաղում է ջղային ու հոգեկան հիւանդութիւնների վերաբերմամբ, բայց կարող են պատահել և բացառութիւններ զանազան ձևերով:

Անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ և այն, որ ջղային հիւանդութիւն ունեցող մօր ազդեցութիւնը զաւակի վրայ աւելի մեծ է լինում, քան



Թէ ջղային հօրը, որովհետեւ մայրն է իր կաթով  
կերակրում երեխային, գլխաւորապէս մայրն է  
հսկում նրա ընտանեկան դաստիարակութեան վրայ  
— մանաւանդ մատաղ հասակում:

Ժ.

Ժառանգների հոգեկան ու ջղային հիւանդու-  
թիւնների զարգացման տեսակէտից մեծ նշանա-  
կութիւն ունի այն հանդամանքը, թէ ծնողներն  
յղութեան միջոցին ինչ դրութեան մէջ են եղել:

Բազմաթիւ փորձեր ցոյց են տալիս, որ այդ  
ժամանակ ծնողի արբած դրութիւնը կորստաբեր  
ազդեցութիւն է ունենում ժառանգի առողջու-  
թեան վրայ: Իրա շնորհիւ ժառանգն ստանում է  
նախատրամադրութիւն դէպի բոլոր այն ջղային ու  
հոգեկան հիւանդութիւնները, որոնցով օժտուած  
են ծնողները:

Երբեմն արբած դրութեան ժամանակ տեղի  
ունեցած յղութիւնից ծնւում են ապուշ երեխաներ:

Արբեցողութեան սարսափելի վտանգը ժա-  
ռանգականութեան վերաբերմամբ յայտնի է դեռ  
չատ հին ժամանակներում: Նոյն իսկ Պլուտարքոսն  
յիշում է այդ մասին և նախազգուշացնում ծնող-  
ներին:

Երբեմն պատահում են այսպիսի դէպքեր. ծնող-  
ներն ու նրանց ազգականները բոլորովին առողջ  
են, չունին ոչ մի ջղային կամ հոգեկան թերութիւն,



յղութեան շրջանն անցել է շատ կանոնաւոր կերպով, բայց երեխաներից մէկը կամ միւսը ծնւում է ապուշ, խուլ, համբ կամ մի ուրիշ հիւանդութեամբ օժտուած:

Օրինակները ցոյց են տալիս, որ այդ տարօրինակ երեւոյթը շատ անգամ վերոյիշեալ արբեցողութեան հետեանքն է լինում:

Բացի արբեցողութիւնից այդ հարցում գերխաղալ կարող են և ուրիշ հանգամանքներ. օրինակ սաստիկ յոգնածութիւնը, մտատանջութիւնը, փոխադարձ սիրոյ սակաւութիւնը և այլն:

Վնասակար ժառանգական հեռեանքներ կարող են առաջ զալ նաև արիւնակից ազգականների ամուսնութիւնից, թէև ոչ միշտ: Յամենայն գէպս պէտք է խոյս տալ այդ աեսակ ամուսնութիւնից:

Վերևում յիշեցինք, որ արբեցողութիւնը կորստաբեր ազգեցողութիւն է թողնում ժառանգների վրայ: Այդ հարցն աւելի պարզելու համար անհրաժեշտ է նկատել, որ ոգելից ըմպելիների սովորական, բայց չափից աւելի գործածութիւնն էլ կարող է հեազհետէ փչացնել օրգանիզմը և վնասակար գեր խաղալ ժառանգականութեան հարցում:

Այգպիսի ճողներից առաջացած ժառանգներն երբեմն բացի գէպի արբեցողութիւնն ունեցած հակումից, ունենում են և ջղային ու հոգեկան թերութիւններ:

Թէ խելագարների և թէ ջղային հիւանդների ազգականների շարքում յաճախ պատահում են նաև արբեցողներ: Գիմենք փաստերին:

Ճրանստիական մի հիւանդանոցում բժիշկ Բուրկեվիչէն մի քանի տարի շարունակ տեղեկութիւններ էր հաւաքում ապուշների մասին:

Այդ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ 1000 ապուշներից 471-ն ունեցել են արբեցող հայր, 84-ը—արբեցող մայր, 65-ի երկու ծնողներն էլ ողելից ըմպելիքներ չափազանց դործածողներ են եղել, 80-ը ծնուել են արբած զրութեան ժամանակ տեղի ունեցած յղութիւնից և այլն:

Մի ուրիշ հիւանդանոցում քննութեան ենթարկուեցին եօթը ընտանիքներ—մինչև երրորդ սերունդը: Դրանցից 17 հոգի ունէին լուսնոտութիւն, ուշադնացութիւն և ուրիշ հոգեկան ու ջղային հիւանդութիւններ:

Կարծում ենք այդ փաստերը բաւական պերճախօս են և կարօտ չեն որևէ բացատրութեան:

### ԺՍ:

Քրոնիքական ալքոհոլիզմի (արբեցողութեան) կորստաբեր հետեանքները յիշելուց յետոյ դառնանք այսպէս անուանեալ «այլասերման հարցին», որը կապ ունի հիւանդոտ ժառանգականութեան հետ:

Այլասերումն կոչում է բնական տիպից դէպի վատը շեղուիլը, այսինքն այն երևոյթը, երբ հետըզհետէ պակասում են անհատի զանազան յատկութիւնները, օրինակ զարգանալու ընդունակութիւնը և այլն:

Հեռեողարար շարունակելով սերունդից սերունդ, այլասերումը կարող է նոյն իսկ վերջացնել ցեղի գոյութիւնը:

Այլասերման նշանները կարող են առաջանալ զանազան պատճառներից:

Ալպեան, Կովկասեան և Ուրալեան լեռներում ազգաբնակիւթեան հոգեկան զարգացման արգելք է լինում ապուշութիւնը, ոսկորների սակաւ աճումը և այլն:

Այլասերման մի ուրիշ օրինակ է ներկայացնում գործարանաշատ քաղաքներում կենտրոնացած բանւորական կեանքը:

Սոցիալական պայմաններն ստիպում են թրշուռու բանւորին դեռ մատաղ հասակից հալ ու մաշ լինել ծանր աշխատանքի տակ, բաւականանալով սակաւ սնունդով, անուշադիր թոյներով առողջապահութեան ամենատարրական պահանջները:

Եւստ հասկանալի է, որ այդպիսի ծնողների ժառանգները լինում են մեծ մասամբ նիհար, գալուկ դէմքով, թոյլ կազմուածքով, որը հեշտութեամբ ենթարկւում է զանազան հիւանդութիւնների (օրինակ ոսկրացաւ—րախիտ, դեղձախտ, թոքախտ և այլն):

Այդպիսով այլասերումն իր հարուածներն հասցնում է հասարակութեան մի ամբողջ գասակարգի:

Ներկայումս արդէն պարզուած է, թէ ի՞նչպիսի նշաններով է աչքի ընկնում այլասերումը: Այսպէս օրինակ, անհատի անատոմիական որոշ



յատկութիւնները բաւական են նրա այլասերումն ապացուցանելու համար:

Այլ յատկութիւններից զլիսաւորներն են դանկի անկանոնութիւնը, այտոսկրների չափազանց մեծութիւնը, ատամների անկանոն դասաւորութիւնը, դրանց տարօրինակ ձևը, ականջային խեցիների զանազան շեղումները, աչքերի կամարաթաղանթի բաղմազան զոյնը և կմախքի մի քանի շեղումները:

Այլ այլասերւող անհատները սովորական մարդկանցից տարբերւում են նաև մի քանի հոգեկան յատկութիւններով: Սրինակ, դրանք ունենում են բարոյական բթացած զգացմունքներ, տարօրինակ ու անզուսպ հակումներ, փչացած սեռական զգացմունքներ և այլն:

Բոլոր այլ յատկութիւնները լինում են բնածին և արտայայտւում են դեռ մատաղ հասակում: Իսկ մտաւոր յատկութիւնները, բառիս բուն մտքով, լինում են բաւարար, նոյն իսկ չափազանց լաւ: Այս վերջին դէպքում ստացւում է մի բնորոշ տիպ, որն աչքի է ընկնում իր տարօրինակութիւններով և կարծես թէ արդէն կանգնած է խելագարութեան շէմքին:

Այլասերման վերոյիշեալ Ֆիզիքական յատկութիւններն երբեմն երևում են նաև սիֆիլիսիկների ժառանգների\* վրայ: Եւ իսկապէս ժառանգական սիֆիլիսը որոշ դէպքերում այլասերման գործոնի դեր է խաղում:

Բնածին ոճրագործների մասին զոյութիւն ունեցող վարդապետութիւնն էլ որոշ չափով հիմ-



նուած է այլասերման յատկութիւնների վրայ: Եւ իսկապէս սովորական ոճրագործները մեծ մասամբ աչքի են ընկնում այդպիսի յատկութիւններով:

Սակայն երբէք հարկաւոր չէ ծայրայեղութիւնների մէջ ընկնել և ամենաչնչին նշանն այլասերման վերագրել: Պէտք է միշտ ի նկատի ունենալ, որ այդ հարցում մեծ նշանակութիւն ունի ամբողջ կեանքը:

Բանը նրանումն է, որ զանազան հոգեկան ու ջղային հիւանդութիւններ առաջացնող հասարակ ժառանգականութեան և այլասերման մէջ գոյութիւն ունին բազմատեսակ աստիճաններ:

Իւրաքանչիւր մանկավարժի և դաստիարակի սրբազան պարտականութիւնն է աչքի առաջ ունենալ բոլոր այդ հանգամանքները:

---

ԺԲ.

Մեր բոլոր ասածների վրայ մի ընդհանուր ակնարկ ձգելով՝ մենք տեսնում ենք, որ ժառանգականութիւնը զգալի չափով որոշում է անհատի թէ ֆիզիքական և թէ հոգեկան յատկութիւնները:

Շատ անգամ դեռ ծնուելուց առաջ վճռում է անհատի ճակատագիրը, այսինքն որոշում է, արդեօք նա երկարակեաց, առողջ, գեղեցիկ, տաղանդաւոր է լինելու, թէ՞ թուլակազմ, հիւանդոտ ու անընդունակ:

Թէև գիտութիւնը դեռ վերջնականապէս չէ պարզել ժառանգականութեան բոլոր օրէնքները,

բայց այնուամենայնիւ արդէն հաստատել է նրա որոշ ազդեցութիւնը հոգու և մարմնի, առողջութեան և հիւանդութեան, բարիքի և չարիքի վերաբերմամբ: Իւրաքանչիւր քայլափոխում հարկաւոր է ուշք դարձնել այդ հանգամանքի վրայ:

Իր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ այն ուսուցիչը կամ դաստիարակը, որը չի աշխատում ուսումնասիրել իր սանիկներին ժառանգական հակումները:

Ժառանգականութեան ուսումնասիրութիւնը կարող է որոշ չափով մեղմացնել այն պահանջները, որոնց ենթարկուում է դաստիարակչական գործը:

Յաճախ երեխայի վատ հակումները, որոնք ժառանգականութեան հետեանք են լինում, նոյն իսկ ամենախելացի դաստիարակութեամբ չեն ուղղուում:

Բայց այդ դեռ չի նշանակում, թէ պէտք է յուսահատ կերպով ձեռքերը ծալել իրողութեան առաջ:

Քաղաքակրթութեան անթիւ անհամար արդիւնքները ցոյց են տալիս, որ մարդկային հզօր խելքը դիտութեան զէնքով զինուած կարողացել է և կարող է ոչնչացնել բնութեան բոլոր այն խոչնդոտները, որոնք արգելք են դառնում մարդկանց առաջագիմութեանը:

Ի հարկէ, ժառանգական վատ յատկութիւններով օժտուած մաճդկային ներքին աշխարհն ունի իր յատուկ պայմանները և զրանց համապատասխան միջոցներով պէտք է մղել կռիւր:

Այստեղ առողջապահութիւնն ու մանկավար-  
ժութիւնը միշտ ձեռք ձեռքի տուած պիտի դոր-  
ձեն:

Երբէք չպէտք է մոռանալ, որ հոգեկան կեան-  
քը կախումն ունի օրդանիզմի որոշ Ֆիզիքական  
յատկութիւններէ:

Բացի գրանից ժառանգականութեան ազդե-  
ցութիւնը հոգեկան ասպարիզում արայայաւում  
է մեծ մասամբ նախատրամադրութեան ձեռով:

Յայտնի գէսքերում գաստիարակչական մի-  
ջոցներով կարելի է մեղմոցնել այդ նախատրամա-  
դրութիւնը: Եթէ գաստիարակչի իր սանիկի մէջ  
ուժեղ կամք հաստատէ, նա գրանով ստեղծած էր  
լինի մի հզօր զէնք ժառանգական վաստ հակում-  
ների դէմ կռուելու համար:

### ԺԳ.

Ժամանակիս բնորոշ յատկանիշն է կազմում  
այն իրողութիւնը, որ մարդկութիւնը հետզհետէ  
աիրանկեալում է բնութեան ոյժերը:

Սակայն մէկը միւսի յեաւեից բաց անելով բնու-  
թեան զազանիքները, շահագործելով նրա անթիւ  
անհամար ոյժերն ու հարստութիւնները, մարդ  
արարածը հետզհետէ ազատութիւն է տալիս իր  
հաճոյքներին:

Նիւթական զուարճութիւններ ստանալու անն-  
չանքն աւելի ու աւելի բոցավառում է նրա սրբ-  
տում:



Նա ամեն ջանք գործ է դնում իր խելքն ու-  
ժեղացնելու և դրանով մի ազդու ղէնք ձեռք բե-  
րելու համար, անուշադիր թողնելով իր էութեան  
բոլոր միւս կողմերը:

Դժբախտաբար մարդկային այդ ձգտումը գեռ-  
շարունակուում է:

Ահա այդ պատճառով մարդը կորցնում է իր  
ինքնիշխանութիւնը, չի կարողանում ազդել իր  
«ես»-ի վրայ և դառնում է անընդունակ իր կրքե-  
րըն ու հաճոյքները կանոնաւորելու: Դա դառնում  
է իր հաճոյքների խաղալիքը:

Ներկայ սերունդի այդ տեսակ թուլակազմու-  
թիւնն հետզհետէ զարգանալով, կարող է լուրջ  
հիւանդութիւն դառնալ և մեծամեծ վնասներ հաս-  
ցնել:

Դժբախտաբար մեր դաստիարակութիւնը ժա-  
մանակի ոգու ազդեցութեամբ իր զլխաւոր ջանքը  
գործ է դնում մարդկային խելքը զարգացնելու  
վրայ, բոլորովին անուշադիր թողնելով կամքի  
դաստիարակութիւնը:

Սակայն իւրաքանչիւր անհատ պարտաւոր է  
զէթ ինքնաշխատութեամբ լրացնել այդ թերու-  
թիւնը, այսինքն զարգացնել իր կամքի ոյժը:

Դաստիարակութիւն, բառի լայն մտքով, նշա-  
նակում է նախապատրաստութիւն կատարեալ կեան-  
քի համար:

Իսկ նախապատրաստուել կեանքի համար — դա  
կնշանակէ զարգացնել այն ընդունակութիւնը, որը  
ղեկավարում է մեր վարմունքը թէ մեր անձնաւո-



բութեանն և թէ շրջապատող հասարակութեանն վերարերմամբ:

Իւրաքանչիւր մարդու համար գլխաւոր հարցն է՝ ի՞նչպէս ապրել, ի՞նչպէս վարուել ամեն մի քայլափոխում:

Այն հարցին պատասխանելու համար պէտք է ունենալ մի ուղղեցոյց, մի ընդհանուր օրէնք:

Մի այդպիսի ուղղեցոյց կարող է լինել մարդկային կամքը, ահա այդ իսկ պատճառով դաստիարակութեանն գլխաւոր նպատակը պէտք է լինի անհատի մէջ հաստատուն կամք զարգացնելը:

Սանձահարել անհատի վաստակումները, արթնացնել քնած զգացմունքները, զարգացնել նրանցից լաւերը, ոչնչացնել վատերը, ամրապնդել մտաւոր ընդունակութիւնները, ձաշակր, մի խօսքով երեխային դարձնել հաւասարակշռիւ բնոյթով մի անհատ—ահա դա պէտք է լինի իւրաքանչիւր ծնողի, իւրաքանչիւր դաստիարակի բուն նպատակը:

Բայց դժբախտաբար հասարակական և դպրոցական դաստիարակութիւնը գրեթէ բոլորովին անուշադիր է թողնում իր գլխաւոր նպատակը, այսինքն կամքի դաստիարակութիւնը:

Մենք ամենայն եռանդով զարգացնում ենք մեր խելքը, ձեռք ենք բերում բազմազան գիտութիւններ, միամիտ կերպով կարծելով, թէ միայն դա է հարկաւոր կեանքի համար:

Բայց չէ՞ որ իւրաքանչիւր անհատ պէտք է ունենայ ծանր կռիւ մղել իր ամբողջ կեանքում:

չէ՞ որ այդ կռիւն աւելի դժուար ու ապարդիւն կլինի առանց հաստատուն կամքի և խոր զգացմունքների:

Քանի որ զոյութիւն ունի յիշեալ դաստիարակչական սիստեմը, բոլորովին զարմանալի չէ, որ շատ մարդիկ լինում են բնաւորութիւնից բոլորովին զուրկ կամ թուլակազմ:

Թուլակազմ մարդը ոչ մի բանի պիտանի չէ: Եթէ դաստիարակութիւնը մեզ չի ապլես զգացմունքների խորութիւն, եթէ նա չի զարգացնում մեր մէջ որոշ բնաւորութիւն, հաստատուն կամք, այն ժամանակ դէժ ինքներս ձգտենք ինքնաշխատութեամբ ձեռք բերել այդ մեծ բարիքները:

Անհատին միջավայրի վատ ազդեցութիւնից ազատ պահելու համար անհրաժեշտ է ապլ նրան դրա դէմ կռուելու զէնք—այսինքն զարգացնել նրա մէջ ուժեղ խելք ու հաստատուն կամք:

Ահա այդ պէտք է լինի դաստիարակութեան գործն ու նպատակը:

Հասարակութիւնն ինչ որ ցանկանում է իրան համար, նոյնը պէտք է ցանկանայ և իր զաւակների համար: Ինչպիսի իրէալներ որ ունի նրա կեանքը, նոյնպիսին պիտի ունենայ և դաստիարակութիւնը, վերջապէս կեանքի և դաստիարակութեան բոլոր հարցերը միշտ պէտք է լինին համերաշխ ու համակերպ:

---

## ԺԴ.

Մեզանից ամեն մէկը կխոստովանի, որ մեր կանանցից շատ շատերը բոլորովին անպատրաստ ու անհամապատասխան են մայրական սուրբ կոչմանը:

Եւ իսկապէս լաւ մայրերի թիւը շատ սակաւ է, նոյն իսկ այսպէս անուանեալ բարձր շրջաններում:

Կնոջը սովորեցնում են ամեն ինչ՝ պարել, երգել հասարակութեան մէջ, փայլել իր նազելի շարժումներով, կրթուած խելքով և այլն և այլն, սակայն նրա բնական կոչման—մայրական սրբազան պարտականութիւնների մասին կամ շատ քիչ բան են հասկացում կամ բոլորովին ոչինչ չեն ասում:

Իրանից առաջ է գալիս ցաւալի իրողութիւն, այսինքն շատ մայրեր աշխարհային ունայն ցանկութիւնների ու հաճոյքների պատճառով մոռանում են իրանց անմիջական պարտականութիւնը և երեխաների հոգատարութիւնն ամբողջապէս թողնում են աղախիններին:

Բայց չէ՞ որ միայն մշտական խնամքն ու հոգատարութիւնը կարող են զարգացնել մօր մէջ հետաքրքրութիւն և խոր հասկացողութիւն դէպի մանկական դաստիարակութիւնը:

Սակայն չպէտք է մոռանալ, որ երբեմն պատահում են չքաւոր կանայք, որոնք անթիւ ու անհամար հոգսերի ու աշխատանքի բեռի տակ կարո-



ղանում են դաստիարակել և երբեմն շատ լաւ դաստիարակել իրանց երեխաներին:

Պարտաճանաչ մայրը ճերութեան հասակում անմխիթար չի մնայ: Նրա քնքոյշ հոգատարութեամբ դաստիարակուած զւաւկները կլինին նրա մխիթարանքը....

Մնահերքելի խօր է մօր ազգեցութիւնը որդու վրոյ: Իբրև ապացոյց բաւական է յիշել այն փաստերը, որ գրեթէ բոլոր երեւելի մարդիկ մի առանձին սիրով են յիշում մայրական զգուանքն ու խնամատարութիւնը:

Մեծահոգութիւնը մեծ չափով կախուած է մեր զգացումների դաստիարակութիւնից:

Եթէ ծնողներն ու դաստիարակները ըմբռնել են ժառանգականութեան նշանակութիւնը, այն ժամանակ նրանք կզգան իրանց սրբազան պարտականութիւնը և ջանագիր կերպով կաշխատեն կեանքի համար պատրաստել ազնիւ, հաստատակամ և քաջարի անհատներ: Դաստիարակութիւնը պիտի համապատասխանէ ժամանակի ոգուն. հակառակ դէպքում տեղի կունենայ այլասերումն:

---

ԺԵ.

Շատ գիտնականներ ու բժիշկներ, ժառանգականութեան օրէնքները քննելով, տարբեր կարծիքներ են յայտնում այն դերի մասին, որ կատարում է դաստիարակութիւնը բարոյականութեան զարգացման գործում:



Իւրաքանչիւր մարդ, սատում են ոմանք, աշխարհ է գալիս իրան յատուկ բնաւորութեամբ ու ընդունակութիւններով:

Սնհասի ողին փոխելու համար պէտք է փոխել նրա ամբողջ ներքին կազմը. բնաւորութիւնը փոխելու համար անհրաժեշտ է փոխել տեմպերամենտը:

Երբ և իցէ տեսնուած է, որ զիւրազոզիո մարդը սառնարիւն դառնայ, որ սառը խելքը անուրջների մէջ ընկնի և այլն և այլն:

Սակայն բարեբախտաբար, ինչպէս իրաւացի կերպով նկատում է Կէյրա զիանականը, այդ կարծիքի հակառակն են ցոյց տալիս ամբողջ մարդկութեան գործունէութիւնը, դաստիարակչական բազմաթիւ փորձերը և մեր ներքին զգացմունքները:

Եւ իսկապէս մի՞թէ չի կարելի ուժեղացնել կամ մեղմացնել—սահմանափակել մեր այս կամ այն զգացմունքը:

Չէ՞ որ մեր ներքին հակումները զարգանում են, երբ նրանց բաւարարութիւն ենք տալիս և ընդհակառակը թուլանում—նոյն իսկ անհետանում են, երբ անուշաղիւր ենք թողնում, երբ յազուրդ չենք տալիս:

Բացի դրանից երբեմն հնարաւոր է արհեստական ձևով էլ մի որևէ յատկութիւն առաջ բերել—օրինակ արբեցողութիւն և այլն:

Սնկասկած կարելի է կրթութեան միջոցով զգալի կերպով փոփոխել մարդկային բնաւորու-

Թիւնը: Պատմութիւնը բազմաթիւ օրինակներ է  
ցոյց տուել:

Ահա այդպիսով դաստիարակութեան առաջ  
բացուած է գործելու մի ընդարձակ ասպարէզ:

Եթէ երեխաները մանուկ հասակից չեն վար-  
ժուում զսպել իրանց, եթէ նրանց ցանկութիւննե-  
րը միշտ կատարուում են, եթէ նրանց թոյլ է տրը-  
ւում զանազան քմահաճոյքներ ցոյց տալ խռովել,  
ցոյցեր անել և այլն, այն ժամանակ շատ հասկա-  
նալի է, որ զրանք կարող են ապագայում ջղային  
ու աննորմալ մարդիկ դառնալ:

Ահա այդ պատճառով անհրաժեշտ է կանո-  
նաւոր առողջապահութեամբ ամրացնել երեխայի  
մարմինը, գործածել ջրաբուժութիւն ու մարմնամար-  
զութիւն, հարկաւոր է նրան աշխատել և ինքն  
իրան զսպել սովորեցնել, հարկաւոր է արգելել այն  
ընթերցանութիւնը, որը կարող է զրգուել երեւ-  
կայութիւնը, մի խօսքով՝ արգելել այն ամենը, ինչ  
որ անհամապատասխան է նրա հասակին ու զար-  
գացմանը:

Սրանից տրամաբանօրէն հետևում է, որ եթէ  
վատ դաստիարակութիւնը կարող է մնաս հաս-  
ցնել մարդկային բնաւորութեանը, ուրեմն լաւ  
դաստիարակութիւնն էլ կարող է նրան աւելի զար-  
գացնել ու բարելաւել:

Ս.մեն մի մարդ, եթէ ցանկանայ, կարող է մեծ  
կամ փոքր չափով փոփոխել իր բնաւորութիւնը:

Մենք կարող ենք անգիտակցաբար ստացած  
սովորութիւնների վրայ աւելացնել և զիտակցա-

կան սովորութիւններ: Մշտապէս դիմադրելով մեր կրքերին, մենք կարող ենք էթէ ոչ բոլորովին ոչընչացնե գոնէլ, մեղմացնել նրանց դերը և այդպիսով ազդել մեր բարոյականութեան վրայ:

Այդ ինքնագաստիարակութիւնը չափազանց արդիւնաւէտ ու յաջողակ է լինում և անջնջելի հետքեր է թողնում մեր հոգու խորքերում:

Անհրաժեշտ է պարզել մեր բնական հակումները և հնար եղածի չափով ուղղութիւն տալ նրանց:

Խելքը և հաստատուն կամքը ամեն բանի կը յաղթեն: Ուրեմն հարկաւոր է դնել մի բարձր նպատակ և ամենայն ջանք ու եռանդով ձգտել դէպի նա:

Ահա այդպիսով բարոյական ու հասարակական հարցերի ճիշտ հասկացողութիւնը, ասում է Փուլկիէ, բնդունելով բնաւորութեան մշտական զարգացումը, աջակցում է բարոյական ու մտաւոր դաստիարակութեան առաջադիմութեանը:

---

### ԺԶ.

Բժշկութիւնն ու առողջապահութիւնը ցոյց են տալիս շատ ճիշտ միջոցներ, որոնցով կարելի է մարդկանց խելացի ու ճարպիկ դարձնել քիչ թէ շատ:

Ինչպիսիք էլ զարմանալի չէ, որովհետեւ մարդկային հոգին մեծ չափով կախումն ունի մարմնի դրութիւնից:



Առողջապահութիւնը կարող է աւլ մարդուն օգտակար սովորութիւններ, կարող է արմատախիւ անել կորստաբեր ախտերը: Նրա միջոցով Ֆիզիքական օրդանիզմը կարող է ազդել մեր բարոյականութեան վրայ:

Առողջապահական տեսակէտից ժուժկալութիւնը մի սրբազան օրէնք պէտք է լինի երկու սեռի համար էլ—մինչև սիրային ամուսնութիւնը:

ժուժկալութեան օրէնքից շեղուիլը առաջ է բերում բազմաթիւ դժբախտութիւններ, որոնց մասին շատ ու շատ անգամ խօսուել ու գրուել է:

Թէև մեր մատաղ սերնդի զգայնականութիւնը շուտ է զարթնում, բայց պատանին կարող է կամքի ու բնաւորութեան ուժով սանձահարել իր կիրքը:

Վերջին ժամանակներս առողջապահութիւնն հաստատել է, որ ողելից բմպելիները մի մեծ չարիք են կազմում և տւելի փաստակար են, քան թէ ժանտախտն ու խոլերան: Ահա այդ պատճառով ողելից բմպելիները պէտք է վաճառուին միայն գեղատներում—իբրև գեղ:

Հակառակ գէպքում մարդիկ կարող են, իւրաքանչիւր օր դորձածելով, սովորութիւն դարձնել և հետզհետէ վարժուել պքոհողիզմի, որը անբարոյականութեան—(սիֆիլիս, վէներական հիւանդութիւններ) և ուրիշ շատ չարիքների պատճառ է դառնում:

Գինու իւրաքանչիւր կաթիլը թոյն է երեսայի համար. թէյն ու սուրճն էլ փաստակար են:



Իժբախտաբար շատ քիչ մայրեր գիտեն առողջապահութեան այդ հիմնական օրէնքները:

Երեխային մրսելուց ազատ պահելու համար հարկաւոր է նրա մարմինն աստիճանաբար ամրապնդել և ոչ թէ ռաից մինչև գլուխը շորերով փաթաթել:

Մաքուր օդն ու ջուրը շատ կարևոր են ոչ միայն երեխաների, այլ և հասակաւորների համար: Նոյնը կարելի է ասել և սնունդի մասին: Շատ օգտակար է մանաւանդ խառը կերակուրը—(միս, իւղ, հաց, կանաչեղէն և այլն): Ոմանց համար կարող են օգտակար լինել զուտ բուսական կամ կիսաբուսական \*) կերակուրները:

Իսկ մարմնամարզական վարժութիւնները դաստիարակութեան հիմքը պիտի կազմեն:

Իաստիարակն ամենայն եռանդով պիտի աշխատի սիրալիբ վարմունքով զարգացնել իր սանիկի պարզամտութիւնը, թափանցել նրա հոգու խորքը և այդպիսով ազգել նրա զգացմունքների ու կամքի վրայ:

Գիտնական Կէյրը ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր դաստիարակի գլխաւոր գործը պէտք է լինի՝ խեղդել իր սանիկի եսասիրական ձգտումները և զարգացնել մարդասիրական զգացմունքները:

Իրա համար հարկաւոր է հէնց մանկութիւնից զարգացնել բարութիւնը և ընդհակառակը

---

\*) Հաբաթը միայն 2—3 անգամ մտեղէն կամ առ ժամանակ բոլորովին հրաժարուել մտեղէն կերակրից:

Ճնշել անդթութիւնն ու կոպիտ զգացմունքները: Բաւականութեամբ պէտք է բնութենէ երեխաների փաղաքշանքը և մեծ զգուշութեամբ դադարեցնել նրանց լացն ու հեկեկանքը:

Չափազանցութիւնները միշտ էլ անտեղի են և նոյն իսկ վնասակար: Երեխաների դժասրտութեան զգացմունքն արթնացնելու համար կարելի է օգտուել Լաֆօնթէնի և Կրիլովի մի քանի ընտիր առակներից կամ իրական կեանքի փաստերից, որպէսզի աւելի շոշափելի կերպով երևան չարութեանն ու դաժանութեան վաս կողմերը, օրինակ, թէ ինչպէս ուժեղը ձնշում է թոյլին:

Անտարբեր ու քնկոտ երեխաների մէջ պէտք է արթնացնել մրցմանն ու պատուասիրութեան զգացմունքը, սակայն մեծ զգուշութեամբ:

Պէտք է այդ զգացմունքը խելացի կերպով ուղղել դէպի մի օգտակար նպատակ, օրինակ, անհրաժեշտ է աշխատել, որ երեխան մրցման մէջ մտնի ոչ թէ կոպիտ Ֆիզիքական այլ մտաւոր ուժով, որ նա թանկ գնահատէ ոչ թէ նիւթական, այլ հոգեկան բարիքները:

Մենք բոլորս էլ զգում ենք բնաւորութեան անհաւասարակշռութիւն, ուստի անհրաժեշտ է երեխաների մէջ զարգացնել հաւասարակշիռ բնաւորութիւն, որը լինելու է որոշ չափով մեղմ, փափուկ, զիջող և պատրաստ ուրիշին օգնելու:

Սյուպիսի բնաւորութիւն մշակելու ամենալաւ միջոցն է ուժեղ կամքը, որով կորելի է ձնշել բարկութեանն ու չարութեան զգացմունքը: Իսկ ինչ-

պէս յայանի է երեխաները շատ հեշտ են սովորում՝ բարկանալ:

Մի որեւէ անախորժութիւն կամ սպառնալիք պատահելիս նախ և առաջ մեզ անհանդուատացնում է անսպասելի երեւոյթը. այդ անհանդուատութիւնն աւելի ու աւելի սաստկանալով, դառնում է բարկութիւն, որին հետեւում է ինքնապաշտպանութիւն, և երբեմն էլ հակառակորդի վրայ յարձակուելու ցանկութիւն:

Բիրօյի կարծիքով բարկութիւնն ունի երեք աստիճան իրանց համապատասխան ձևերով:

Առաջին աստիճանում՝ բարկութիւնն յայտնւում է յանկարծակի:

Յայանի է, թէ ինչպիսի եռանդով է արտայայտւում՝ այդ զգացմունքը երեխաների մէջ, երբ նրանց մի որեւէ ցանկութիւնը անկատար է մնում:

Երկրորդ աստիճանում՝ բարկութիւնն արտայայտւում է ոչ այնպէս յանկարծակի կերպով: Այս դէպքում անհատը բաւականանում է փոխադարձ սպառնալիքով կամ մի որեւէ բռնի արարքով:

Վերջապէս երրորդ աստիճանում յարձակումը ոչ միայն յետաձգւում է, այլ և զրգոռած դրութիւնը որոշ չափով մեղմանում, ծածկւում է:

Այդ դէպքում յարձակուելու ձգամանը հակառակում է խելքը, որն առաջացնում է մի ասք կռիւ անհատի մէջ, և զրանից ծնւում է ասելութիւն, նախանձ, կեղծաւորութիւն և այլն:

Բարկութեան ազդեցութիւնն այնքան ուժեղ է լինում, որ երբեմն որոշ փոփոխութեան են են.



Թարկում մեր օրգանիզմի գործողութիւնները: Օրֆինակ, շնչառութիւնն արագանում է, ձայնը խրոպոտ դառնում, երակները լայնանում, սրտի բարախումն արագանում, դէմքը կարմրում և այլն և այլն:

Ձափազանց մեծ բարկութեան ժամանակ անհասար խեղդում է, չի կարողանում խօսել, նրա բերանը ծածկում է վրփուրով, իսկ հիւանդոտ մարդկանցից շատերը սրտի պայթոց են ստանում: Սյգպիսի դէպքեր շատ են պատահել:

Բացի գրանից այդ ժամանակ մարդ ցաւ էլ չի զգայ, եթէ նրա մարմին նոյն իսկ ուժեղ հարուածներ հասցնեն:

Ինչ վերաբերում է բարոյական զգայնականութեանը, կարելի է միայն այսքանն ասել, որ մարդ կարծես բոլորովին կորցնում է իր գլխասրտութիւնը, բարութիւնը և նոյն իսկ ինքնագիտակցութիւնը:

Սյդ չափով բարկացած մարդը չի կարողանում զանազանել բարին չարից, օգտակարը մնասակարից, նա կորցնում է իր յիշողութեան ու գատողութեան ընդունակութիւնները և կատարում է երբեմն շատ անմիտ բաներ, կարծես խելագար լինի:

Զգացմունքների ու խելքի այդպիսի խանգարումը խանգարում է և կամքի կանոնաւոր գործողութիւնը:

Ահա թէ բարկութիւնն ինչ աստիճանի կարող է հասնել և ինչպիսի հետեանքներ առաջացնել:

Եթէ բարկութեան բռնկումը տեղի է ունենում յաճախ և առանց արգելքի, այն ժամանակ յո՞քն աւելի մեծանում է և նրան արմատախիլ անելը դժուարանում:

---

Ժէ.

Տոման իրաւացի կերպով ցոյց է տալիս, որ դժուար է բացատրել բարկութեան պատճառները, որովհետեւ զանազան մարդիկ զանազան պատճառներից են բարկանում և այդ պատճառները շատ անգամ կախումն ունին բոլորից ու շրջապատող միջավայրից:

Կարելի է ենթադրել, որ բարկանալու ձրգատումը մեծ չափով կախուած է Ֆիզիքական կողմից և ժառանգականութիւնից:

Դեռ հին ժամանակներում նկատել էին, որ ջղային, սանդուխնիկ տեմպերամենտին համապատասխանում է զիւրազրգիւ բնաւորութիւնը:

Իհարկէ թոյլ, զիւրազրգիւ ջղեր ունեցող անհատն աւելի շատ տրամադիր կլինի բարկանալու, քան թէ առողջակազմ մարդը:

Մենք ամեն օր տեսնում ենք, որ առողջ և ուժեղ մարդիկ սովորաբար հեզ ու հանդարտաբարոյ են լինում, իսկ նիհար ու թոյլ մարդիկ—ընդհակառակը, այսինքն բարկացկոտ:

Բարկանալու հակումն ուժեղացնում են բոլոր այն պատճառները, որոնք քանդում են ջղային հա-

մակարդութեան հաւասարակշռութիւնը և զօրեղացնում են մարդկային զգայնականութիւնը: Դրանց թւում առաջին տեղն են բռնում ուղեից բնակիչները, ծխելը և զեղի կենցաղավարութիւնը:

Բարոյական պատճառներն էլ քիչ զեր չեն խաղում այդ հարցում:

Ունայնասէր և մեծամիտ մարդիկ երբեմն բարկանում կատաղում են ամենաչնչին պատճառներից, ամենաանշան վիրաւորանքից:

Պակաս բարկացկոտ չեն լինում ծնողների կողմից երես առած մարդիկ:

Սյգպիսիները մանուկ հասակից վարժւում են կատարուած տեսնել իրանց բոլոր ցանկութիւններն ու հաճոյքները, ուստի հակառակը պատահելիս դիւրութեամբ զրգուում ու բարկանում են:

Երբեմն էլ բարկութիւնն առաջ է գալիս արդարացի պատճառից, օրինակ անհատը չի կարող չքարկանալ երբ ոտնակոխ է լինում նրա արժանապատուութիւնը, երբ ճնշւում է նրա ազատութիւնը:

Սյստեղ ինքնապաշտպանութեան անխիւ բրնազին արտայայտւում է բարկութեան ձևով:

Ուրեմն գոյութիւն ունի և իրաւացի բարկութիւն, որը տեղի է ունենում որոշ բոսկնեւում և որը մարդու սրբազան զգայմունքներից մէկն է կազմում:

Անհրաժեշտ է միշտ խոյս տալ այն բոլորից, ինչ որ կարող է անտեղի կերպով զրգուել ու բարկացնել երեխաներին. որովհետև դրանով երեխաների մէջ առաջ կգայ վատ սովորութիւն:



Դժբախտաբար կան ճնողներ ու զատիարակներ, որոնք առանց հասկանալու այդ ճշմարտութիւնը, անդի-անաեզի հանաքներով ու սրախօսութիւններով բարկացնում են երեխաներին:

Օրինակ նրանք խլում են երեխայի խաղալիքը, գրգռում են իւրաքանչիւր քայլափոխում և այլն:

Թէև մի քանի դէպքերում բարկութիւնը կարող է լինել արդարացի, բայց ընդհանուր առմամբ հանդարտութիւնն ու սառնարիւնութիւնը միշտ գերազատելի է, մտնաւանդ դպրոցական կեանքում:

Ակնյայտնի ճշմարտութիւն է, որ ոչ մի միջոց այնպէս չի ազդում դիւրադրդիւ անհատի վրայ, ինչպէս շրջապատողների սառնարիւնութիւնը:

### ԺԲ.

Բայց միայն բարկութեան հակումը չէ, որ խանգարում է հանդարտ ու կանոնաւոր բնաւորութիւն մշակելուն: Այդ անսակեալից մեծ դեր է խաղում ունայնասիրութիւնը:

Եթէ մի մարդ ամեն կերպ աշխատում է հերքել ուրիշների կարծիքը, ոչնչացնել նրանց ազդեցութիւնը, դա ցոյց է ստի նրա մեծամտութիւնը, այսինքն այդ մարդն ուզում է ցոյց տալ, որ ինքն ամենից բարձր, ամենից խելացի է:

Երբեմն այդպիսով մարդկանց կեղծ ինքնասիրութիւնն այն աստիճանի է հասնում, որ դրանք սկսում են անդիտակցարար կռիւ մղել նոյն իսկ ամենալաւ ամենախելացի բաների դէմ:

Անհրաժեշտ է կռուել այդ վաստ հակման դէմ, անհրաժեշտ է հէնց մանուկ հասակից երեխաների մէջ մտցնել համեստութեան զգացմունքը և սովորեցնել նրանց ճշտութեամբ գնահատել թէ իրանց և թէ ուրիշների արժանիքը:

Երբէք անտեղի կերպով չպէտք է հակառակել երեխային, չպէտք է չարացնել նրան:

Եթէ անմիջապէս չհեռացնենք մեր այդ սովորութիւնը, յետոյ արդէն շատ ուշ և դժուար կը լինի:

Երեխայի դիւրազգացութիւնն էլ երբեմն վնասակար հեռեանքներ է առաջացնում, ուստի հարկաւոր է զրա դէմ միջոցներ ձեռք առնել:

Գիանական Կէյրա ասում է, որ եթէ մենք կանոնաւորենք ու չափաւորենք երեխայի դիւրազգացութիւնը, այն ժամանակ կոհնչանան նրա քմահաճոյքներն ու անտեղի պահանջները:

Հաստատակամութեան օրինակ ցոյց տալով, մենք կարող ենք երեխայի թեթեամտութիւնը ոչնչացնել, որովհետեւ նա բնականաբար կաշխատի հեռեւէլ այն մարդկանց օրինակին, որոնց սիրում ու յարգում է:

Ծնողների ու դաստիարակների օրինակը միշտ խոր ազդեցութիւն է թողնում երեխաների վրայ:

Որպէսզի երեխան կարողանայ զսպել իր բարկութիւնը, ձնշել փառասիրութիւնը, արմատախիլ անել իր թեթեամտութիւնը— անհրաժեշտ է ներգործել նրա կամքի վրայ:

Այս դէպքում երեխան կռիւ պէտք է մղէ իր ետի, իր սեպհական հակումների դէմ, ուստի շատ հասկանալի է, որ առանց ուժեղ կամքի այդ կռիւն ապարդիւն կմնայ:

Պէյօն ստում է, որ թէ՛ բարոյական ազատութիւնը, — (այսինքն այն ընդունակութիւնը, որով մարդը կարողանում է իր բնազդն ենթարկել ազնիւ ձգտումների ազդեցութեանը), թէ՛ քաղաքական ազդեցութիւնը, թէ՛ այն ամենը, ինչ որ մի որեւէ արժէք ունի կեանքում, ձեռք են բերում միայն անդուլ ջանքերով, միայն մշտական կռուով:

Այդպիսի ազատութիւնը միայն եռանդոտ ու հաստատակամ մարդկանց է բաժին ընկնում:

Միայն նա կարող է ազատ լինել, ով արժանի է ազատութեան:

Երեխայից երբէք չպէտք է պահանջել անպայման հնազանդութիւն, երբէք չպէտք է ձնշել նրա ինքնուրոյնութիւնը: Ընդհակառակն իւրաքանչիւր գաստիարակ պարտաւոր է իր սանիկի մէջ զարգացնել նախաձեռնութեան ոգին:

Անպայման հնազանդութիւնը կ'թուլացնէ երեխայի կամքը, իսկ թուլակալով՝ անհատը չի կարող կեանքում ինքնուրոյն լինել, չի կարող վատ ազդեցութիւններից ազատ մնալ:

Զէ՞ որ գաստիարակութեան նպատակն է պատրաստել այնպիսի անհատներ, որոնք կարող են ազատ ու ինքնուրոյն կեանք վարել և ոչ այնպիսիները, որոնք միայն հնազանդուել գիտեն:



Իւրաքանչիւր մարդ զեռ մանուկ հասակից պէտք է փորձուի կեանքի մէջ, պէտք է հասկանայ այս կամ այն վարմունքի լաւ ու վատ հետեւանքները:

Ահա այդ պատճառով հարկաւոր է աշխատել, որ ծնողական իշխանութիւնը աստիճանաբար փոխարինուի երեխայի ինքնիշխանութեամբ:

Բայց երեխային ինքնուրոյնութեան վարժեցնել չի նշանակում նրա բոլոր քմահաճոյքները կատարել:

Եթէ երեխան վարժուի ոչ թէ բռնի, այսինքն երկիւղից առաջացած, այլ ազատ հնազանդութեան, այն ժամանակ նա կկարողանայ ապագայում ինքնուրոյն լինել, իր սեպհական խելքով ու կամքով ղեկավարուել:

Կանոնաւոր աշխատանքը նպաստում է հաստատուն կամքի զարգացմանը:

Հանոնաւոր զբաղմունքը թէև մարդուց որոշ ջանք ու եռանդ է պահանջում, բայց միեւնոյն ժամանակ վարժեցնում է զժուարութիւններն յազմել, ծանրութիւններն թեթեացնել:

Մնկասկած, ասում է Պէյօ, մարդու ինքնուրոյնութիւնը զարգացնելու ամենալաւ միջոցն է ամեն օր կրկնուող կանոնաւոր աշխատանքը:

Սյդ աշխատանքը սկզբում ծանր ու զժուար կերեւայ, բայց հետզհետէ սովորութիւն դառնալով, կթեթեանայ և մշտական պահանջ կդառնայ:

Թող ծնողներն իրանց երեխաներին տան ընթերցանութեան այնպիսի զրքեր, որոնց մէջ նկա-

րազրուած է այն նշանաւոր ճանապարհորդների և մեծ մարդկանց կեանքը, որոնք իրանց ջանք ու եռանդով յաղթել են դժուարութիւններին, ոչնչացրել են խոչընդոտները:

Այդպիսի բնթերցանութիւնը կարող է մատակ սերնդին ներշնչել վստահութիւն և սովորութիւն:

Հարկաւոր է ամեն կերպ ոչնչացնել երեխայի անտարբերութիւնն ու յոռետեսութիւնը, անվրտահութիւնն սւ կասկածոտութիւնը:

Իւրաքանչիւր ծնող, իւրաքանչիւր դաստիարակ պիտի աշխատի երեխայի մէջ ամրացնել հաւատ դէպի սեպհական ոյժն ու նախաձեռնութիւնը:

---

ԺԹ.

Առողջապահութիւնն ու բժշկութիւնը ցոյց են տալիս, որ հաստատուն կամք զարգացնելու գլխաւոր միջոցներից մէկն է ֆիզիքական դաստիարակութիւնը, ուստի երբէք չպէտք է անուշադիր թողնել այդ հանգամանքը:

Գիտնական Պէյօն ասում է, թէ հաստատուն կամքը տեղական ջանքերի դոււնորն է կազմում:

Իսկ չպէտք է մոռանալ, որ այդպիսի ջանքերն առանց առողջութեան երբէք չեն կարող գոյութիւն ունենալ:

Առողջ հոգին առողջ մարմնի մէջ կլինի:

Առանց առողջութեան կեանքը մեռած է:

Իսկ լաւ առողջութիւն ունենալու համար անհրաժեշտ է իրագործել առողջապահութեան բոլոր պահանջները հայի, օղի և արեան շրջանառութեան վերաբերմամբ:

Բարոյական դաստիարակութեանը մեծ ծառայութիւն կարող են մատուցանել և արհեստական միջոցները—մանաւանդ հիպնոտիզմը, թէև վերջինս ոչ միշտ ազդեցութիւն ունի:

Հիպնոտիզմի և ներշնչման միջոցով կարելի է ուղղել անհաստի բարոյական այս կամ այն թերութիւնը, կարելի է հաւատացնել, որ նա ուրիշ մարդ է կամ կարող է ուրիշ մարդ դառնալ:

Իբրև սպացոյց բաւական է յիշել հետեւեալ հետաքրքիր դէպքը, որ պատահել է Փարիզում:

Սյուսեղ բժիշկն հիպնոսում է մի արբեցողի, նրա առաջ գիծ է քաշում և ասում է բարձրաձայն.—Տե՛ս, այդ գիծը զինեաան շէմքն է, բայց դու երբէք չպէտք է անցնես այն կողմը:

Փորձն աջողում է, արբեցողն առժամանակ դադարում է զինեաուն յաճախելուց:

Սյո՛, մեծ է զիտութեան ոյժը, սակայն աւելի մեծ է մարդկային թշնամու—մոլութեան ոյժը:

Արբեցողը վերջապէս զիմում է խորամանկութեան. նա չի մանում զինեաուն, բայց դռան այս կողմում կանգնած, այսինքն առանց չարաբաստիկ («գիծն») այն կողմն անցնելու՝ խմում է ցանկալի քմպելին:

Վերջապէս բժիշկն հասկանում է իրողութիւնը և նորից հիպնոսում արբեցողին:



Սյս անգամ նա բացականչում է. — Ահա ձեռիդ է օղիով լին բաժակը, բայց դու երբէք պիտի չամարձակուիս խմել նրանից:

Սյզ փորձն արդէն լիակատար աջողութեամբ է պսակում և արբեցողն ընդմիշտ դադարում է վնասակար արարքից:

Նոյն միջոցով կարելի է բժշկել և ուրիշ շատ հիւանդութիւններ ու բարոյական պակասութիւններ:

Սմերիկայում հիպնոտիզմը գործածութիւն է ստացել նոյն իսկ դաստիարակչական գործում:

Սյզանդ միշտ հիպնոտիզմի ազդեցութեանն են գիմում, երբ հարկաւոր է մոլորուածներին ու փշացածներին ուղիղ ձանապարհի վրայ կանգնացնել:

### Ի.

Մատաղ սերնդի համար շատ մեծ նշանակութիւն ունի հոգեկան որոշ արամադրութիւնը:

Երեակայեցէք մի օրիորդ կամ երիտասարդ պարոն, որն աւարտել է իր ուսման դասընթացը և որի առաջ բաց է գործունէութեան մի լայն ասպարէզ:

Բայց նա փոխանակ այդ ասպարէզը մանելու, փոխանակ օգուտ տալու իր հայրենիքին և ազգին, անձնատուր է լինում մի անսակ յոռեւեսութեան ու անտարբերութեան:

Նա զգում է իրան միայնակ, ամբողջ կեանքը դառնում է նրա համար մի ծանր բեռ. ոչ մի երեւոյթ, ոչ մի դադափար կամ իդէալ չի գրաւում նրան:

Բայց ինչո՞ւ, չէ՞ որ նա ունի խելք ու կրթութիւն, ունի այն ամենը, ինչ որ հարկաւոր է բազմաւորութեան համար:

Սյո՛, նա ունի այդ բոլորը, բայց չունի «ընդհանուր ներքին տրամադրութիւն», չունի ոչ մի ձգտում դէպի գործունէութիւն — յանուն մարդկութեան, յողուտ շրջապատողներէ: Նրան պակասում է այն սէրը դէպի կեանքն ու մարդ-արարածը, այն կէնսալէտ հեռաքրքրութիւնը, առանց որին անհասար չի կարող հաւատալ վարդազոյն ապագային, չի կարող ձգտել դէպ առաջ ու առաջ:

Տուէ՛ք նրան ցանկալի ընդհանուր տրամադրութիւնը և նա բոլորովին կկերպարանափոխուի — կհասկանայ կեանքի արժէքը. կաշխատի ոչնչացնել խոչընդոտները և կձգտի դէպի մի որոշ գործունէութիւն, դէպի մի դադափարական նպատակ:

Շատ հասկանալի է, որ այդպիսի առողջ տրամադրութիւնը մի շարք պատմական ու անտեսական պատճառների հեռեանք է, սակայն դրանց մասին խօսելը մեզ շատ հեռուն կտաներ:

Թող իւրաքանչիւր ծնող կամ դաստիարակ աչքի առաջ ունենայ, որ խելացի դաստիարակութեան նպատակը պէտք է լինի, ոչ միայն երեխայի խելքը զարգացնել, դիտութեան պաշարն աւելացնել, այլ և նրա «զգացմունքներն ու երեակայու-

Թիւնը») կրթել, որովհետեւ զբանք են մարդկային բնաւորութիւնը լրացնողը, զբանք են նրա կամքին որոշ ուղղութիւն և ձևակերպութիւն տուողը:

Այդպէս ուրեմն խելքի, կամքի, զգացմունքների ու երևակայութեան նպատակայարմար դաստիարակութիւնը միայն կարող է կանգնեցնել անհատին ցանկալի բարձրութեան վրայ, կարող է տալ նրան երջանկութիւն և ձգտում՝ զէպի զեղեցիկն ու զազափարականը:

Այդպիսի դաստիարակութիւնը պիտի զարգացնէ երեխայի ծաշակը, պիտի նրբացնէ նրա զգացմունքները զէպի լաւն ու բարին, զեղեցիկն ու վսեմը:

Գրանով կբարձրանայ բարոյական իդէալը, որը կնպաստէ մարդկային բարքերի բարելաւութեանը:

Առանց այդպիսի դաստիարակութեան չկայ «ընդհանուր առողջ տրամադրութիւն»), իսկ առանց այդպիսի տրամադրութեան չկայ բաղդաւորութիւն, չկայ հետաքրքրութիւն ու սէր զէպի կեանքը, չկայ ոչ հաւատ և ոչ յոյս:

---

ԻՍ.

Մեզանից իւրաքանչիւրին յայտնի է, թէ որքան խորն են զբոշմում մանկական առաջին սպաւորութիւնները:

Ահա հէնց այդ պատճառով ծնողները պարտաւոր են ծննդեան հէնց առաջին օրից խնամք



տանել երեխայի վրայ, զարդարել նրա օրօրոցն ու սենեակը գեղեցիկ իրերով, որպէսզի այդ մասագահաս էակի կեանքը սահի քաղցր սպաւորութիւնների տակ:

Սյսանդ հարկաւոր չէ ոչ ձօխութիւն և ոչ աւելորդ շռայլութիւն:

Թող մանկանոցը լինի մաքուր, լոյս և պարզ ու գեղեցիկ պատկերներով զարդարուած:

Թող օրօրոցն ու շորերը լինին հասարակ, բայց մաքուր, յարմարաւոր ու ճաշակով:

Թող մօր կամ ծծմօր վարմունքը լինի քրնքոյշ ու նախամտածուած, վերջապէս նրանց ձայնը թող հնչէ երեխայի ականջին միշտ մեղմ, միշտ բարութեամբ լի, որովհետև միայն այդպիսով կարելի է մանկական ջինջ հոգու խորքում ամրացնել բարու և գեղեցիկ առաջին սերմերը:

Իհարկէ գեղեցկութիւնն ունի զանազան աստիճաններ և այդ աստիճանները որոշելը կախուած է անհատի ճաշակից, սովորութիւնից և այլն:

Երեխայի խաղալիքները պիտի լինին գեղեցիկ և ոչ բազմաթիւ, որպէսզի նա կարողանայ զբաւուել ու կենտրոնանալ:

Սյգ հարցում նրա ինքնուրոյնութեանն ու երեւակայութեան ոյժին պէտք է սալ որոշ ազատութիւն:

Իրանց գեղեցկութեամբ ու նազելի շարժումներով երեխայի վրայ շատ լաւ ազդեցութիւն են ունենում մի քանի մանր կենդանիներ, օրինակ շունը, կատուն, աղաւնին և այլն. բայց իհարկէ

երեխան երբէք չպիտի համբուրէ այդ կենդանիներին:

Բուսական աշխարհն էլ շատ լաւ է ազդում երեխայի վրայ, ուստի ցանկալի է, որ երեխան ունենայ իր սեպհական մարդը, իր պատլիկ ծաղկանոցը և մեծերի հսկողութեամբ խնամք տանի զրանց վրա, շինէ փոքրիկ կամուրջներ և ցանկապատեր և այլն:

Բայց երեխայի սրտում ամենից խոր, ամենից քաղցր տպաւորութիւն թողնողն է մայր բնութիւնն իր հրաշալի երևոյթներով ու անսքերով:

Ո՛րպիսի բաւականութիւն են պատճառում մատաղահաս մանկանը աստղալից երկինքը, լուսնի աղօտ ճառագայթներով լուսաւորուած դաշտանկարը, սարերն ու ձորերը, լճերն ու ծովերը, դեռերն ու կանաչազարդ մարգագետինները...

Թող ուրեմն ծնողներն ու դաստիարակները աչքի առաջ ունենան այդ հանդամանքը և զբօսանքների միջոցով իրանց սանիկներին ճաշակել տան այդ անուշիկ տպաւորութիւնները:

Պակաս ուրախութիւն չեն պատճառում երեխային նաև մարմնամարզութիւնը, պարերը, շարժական խաղերը բաց օդում, մակոյկով զբօսանքը և այլն:

Հապա ի՛նչպիսի անջնջելի հետքեր է թողնում օրօրոցի երգը—մայրական այդ անուշ դայլայլիկը...

Այդ հետքերն աւելի խորը, աւելի զօրեղ են լինում, երբ մայրն ու ծծմայրն ունենում են դուրեկան ձայն, նուրբ լսողութիւն և երբ օրօրոցից

յեաոյ էլ երեխայի ականջին մերթ ընդ մերթ  
հնչում է քաղցր երգն ու երաժշտութիւնը:

Բայց զժբախտաբար մեր զաւառներում չկան  
երաժշտական ընկերութիւններ ու երգեցիկ խում-  
բեր, ուստի և մեր երեխաները մեծ մասամբ զօրկ  
են մնում այդ մեծ բաւականութիւնից:

Սակայն ինչ որ անհնարին է երաժշտութեամբ,  
կարելի է անել համապատասխան ընթերցանու-  
թեամբ:

Ձէ՞ որ բանաստեղծական զրուածքներն էլ կա-  
րող են նրբացնել անհատի ճաշակը, կարող են ազ-  
նուացնել նրա զգայմունքները:

Մանկական ընթերցանութեան համար նշա-  
նակուած զրքերը պէտք է ունենան պարզ, հասա-  
րակ, բայց գեղեցիկ լեզու և մի որոշ սուղութիւն:

Նրանց բովանդակութիւնը պէտք է լինի պատ-  
մական, տեղադրական, կենսադրական կամ բնու-  
թեան երևոթների նկարագրութիւն:

Սյգալիսի զրքեր կարգալով, երեխան կստա-  
նայ զխտութեան մի մեծ պաշար մարդկային խել-  
քի և ահեղ բնութեան գեղեցկութեան մասին:

Մեր գրականութիւնը զժբախտաբար շատ աղ-  
քաւ է այդպիսի զրքերից: Բայց չէ՞ որ հասկացող  
մարդիկ իրանց նիւթական օգնութեամբ գէթ մա-  
սամբ կարող են լրացնել այդ պակասը, կարող են  
հրատարակել ցանկալի զրքերը:

Բայց միայն զրքերն էլ բաւական չեն:

Հասակաւորներն իրանց վարմունքով, իրանց  
կենցաղավարութեամբ պիտի ցոյց տան բարու և



զեղեցկի, արդարութեան և ազնութեան կենդանի օրինակը:

Այդպիսի օրինակը մեծ ազդեցութիւն կունենայ երեխայի սրտի վրայ:

Չպէտք է մոռանալ, որ զրեթէ իւրաքանչիւր մարդ կարող է զարգացնել երեխայի խելքը, բայց ոչ բոլորը կարող են կրթել նրա սիրտը, այն ինչ կրթուած ու զարգացած սիրտն է միայն մարդուն երևելի դարձնողը:

Պէտք է միշտ աշխատել ընտանիքի, հասարակութեան, ազգի և ամբողջ մարդկութեան համար:

Եւ այդ հարցը միշտ արձագանք պիտի գտնի կնոջ զգայուն սրտում:

Մեզ հարկաւոր են կրթուած կանայք, դաստիարակուած մայրեր, որովհետեւ զխաւորապէս զրանց զեկալարութեամբ է ընթանում ընտանեկան դաստիարակութիւնը, զրանց հսկողութեամբ է մեծանում մասազ սերունդը:

---

ԻՅ.

Ամփոփելով մեր բոլոր ասածները ժառանգահանութեան և դաստիարակութեան մանին, գալիս ենք հետեւ եզրակացութեան.

1. Երեխան իր հետ աշխարհ է բերում որոշ ընդունակութիւններ, ժառանգական որոշ յատկութիւններ, բայց զրանք կարող են դաստիարակութեան ազդեցութեամբ քիչ թէ շատ փոփոխուել, այս կամ այն ուղղութիւնն ստանալ:

Ահա հէնց այդ պատճառով իւրաքանչիւր պետութիւն, ժողովուրդ կամ ընտանիք իր ամենամեծ, ամենալուրջ գործը պէտք է համարէ նպատակայարմար դաստիարակութիւնը:

2. Միշտ աչքի առաջ պէտք է ունենալ, որ անհատի հոգեկան գործունէութիւնը սերտ կերպով կապուած է նրա օրգանիզմի դրութեան հետ:

Ֆիզիքական առողջութիւն, բաւարար նիւթական, մտաւոր և բարոյական սնունդ — ահա դրանք են կանոնաւոր զարգացման գլխաւոր պայմանները:

3. Ինչպէս յայտնի է, մարդու հոգեկան կեանքը բազկացած է գլխաւորապէս երեք տեսակ երեւոյթներէից, որոնք նրա զգացմունքների, խելքի և կամքի արդիւնքն են կազմում:

Եթէ մենք կրթենք միայն զգացմունքները, այն ժամանակ երեխան կդառնայ զգայուն՝ բայց բութ. եթէ կրթենք միայն խելքը, այն ժամանակ կստացուի ինաւելիզենա՝ բայց սանձարձակ ու անսիրտ էակ:

Վերջապէս միմիայն կամքի դաստիարակութիւնն էլ լիակատար հետեւանքի չի հասցնի:

Ահա այդ պատճառով նպատակայարմար դաստիարակութիւնը ներգաշնակ կերպով պիտի կրթէ — զարգացնէ թէ՛ խելքը, թէ՛ զգացմունքները և թէ՛ կամքը:

Միայն այդպիսի ներգաշնակութեամբ կարելի է ստանալ ցանկալի արդիւնքը:

4. Պատանեկական հասակն արժանի է մի առանձին ուշադրութեան, որովհետեւ այդ հասակում թէ՛ արական և թէ՛ իգական սեռի բարոյական

տիպը որոշ ձև է ստանում, այսինքն սկսում է սեռական հակումը:

Այդ հակումը կարող է զօրեղ ազդեցութիւն ունենալ մարդու Ֆիզիքական և բարոյական յաւկութիւնների վրայ:

Երբէք չպէտք է մոռանալ, որ դիւաւորապէս այդ հասակում են սկիզբն առնում «փշայած սովորութիւնները», զանազան կորստարեր հիւանդութիւնները, որոնք հետզհետէ զարգանալով պատճառ են դառնում բազմաթիւ դժբախտութիւնների:

Իհարկէ այստեղ մեծ նշանակութիւն ունին շրջապատող հանգամանքները:

5. Մեղանից իւրաքանչիւրի սրբազան պարտականութիւնն է օգնել մերձաւորին, հասկացնել ճշմարտութիւնը:

Ուրեմն աշխատենք խելացի կերպով և յուսանք, որ դիտութիւնն ու քաղաքակրթութիւնը վերջապէս ցոյց կտան մեզ այն ուղիղ ճանապարհը, որով պիտի ընթանայ կատարեալ մարդը:

Անհրաժեշտ է միայն աւելի եռանդ, աւելի սէր և անձնազոհութիւն:







